

Գոհար Շահնազարյան

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ 2005



Ձեռնարկը նվիրված է ժամանակակից հայ հասարակությունում տեղի ունեցող քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային գործընթացների գենդերային վերլուծությանը: Աշխատանքում քննարկվում է վերոնշյալ գործընթացների ազդեցությունը կանանց և տղամարդկանց կենսակերպի, սոցիալական նույնականացման և սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների վրա ձևավորվող սոցիալական շերտավորման համակարգում, ինչպես նաև վերլուծվում են տարբեր սոցիալական ինստիտուտներում կանանց և տղամարդկանց ներգրավվածությունը և մասնակցությունը: Աշխատանքում դիտարկված են նաև ժամանակակից հայ հասարակությունում գոյություն ունեցող դիրքորոշումները գենդերային հավասարության հիմնախնդրի վերաբերյալ և արված են որոշ առաջարկություններ՝ Հայաստանում գենդերային քաղաքականության մշակման և ներդրման բնագավառում: Ձեռնարկը կարող է օգտակար լինել գենդերային հիմնախնդիրներով հետաքրքրված հետազոտողների, դասախոսների, ուսանողների, ինչպես նաև գենդերային և կանանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների համար:

Աշխատանքն իրականացվել է «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան 2005» (Եվրասիա հիմնադրամ) հետազոտական դրամաշնորհի շրջանակներում՝ Նյու Յորքի Կարնեգի Կորպորացիայի ֆինանսական աջակցությամբ:

Հեղինակը շնորհակալություն է հայտնում որակական հետազոտության անցկացմանն աջակցություն ցուցաբերած աշխատանքային խմբին և տվյալների համակարգչային մշակումը իրականացրած Ս. Հայրյանին:

Հատուկ շնորհակալություն ՀՌԿԿ-Հայաստան-ի աշխատակազմին, մասնավորապես, տ.գ.դ. Գ. Մանասյանին աշխատանքի քննարկման և արժեքավոր առաջարկությունների համար:

Հիմնական հասկացություններ: գենդերային հավասարություն, գենդերային դիրքորոշումներ: սոցիալական շերտավորում, սոցիալ-տնտեսական կարգավիճակ:

Special thanks to CRRC-Armeni, particularly, Dr. Haghine Manasyan for the discussion of work and valuable recommendations.

Key words: gender equality, gender attitudes, social stratification, social-economic status.

Բովանդակություն

Աշխատանքի համառոտ նկարագրություն

Գլուխ 1. Աշխատանքի նպատակները, խնդիրները և մեթոդաբանությունը

Գլուխ 2. Սոցիալական գործընթացների գենդերային բնութագրիչները փոխակերպվող հայ հասարակությունում

Գլուխ 3. Բնակչության պատկերացումները գենդերային փոխհարաբերությունների վերաբերյալ ժամանակակից հայ հասարակությունում

Ամփոփում

Աշխատանքի համառոտ նկարագրություն

Աշխատանքը նվիրված է ժամանակակից հայ հասարակությունում տեղի ունեցող քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային գործընթացների գեոդերային վերլուծությանը: Քննարկվում է վերոնշյալ գործընթացների ազդեցությունը կանանց և տղամարդկանց կենսակերպի, սոցիալական նույնականացման և սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների վրա ձևավորվող սոցիալական շերտավորման համակարգում, ինչպես նաև վերլուծվում է տարբեր սոցիալական ինստիտուտներում կանանց և տղամարդկանց ներգրավվածությունը և մասնակցությունը: Աշխատանքում դիտարկված է նաև ժամանակակից հայ հասարակության վերաբերմունքը գեոդերային հավասարության հիմնախնդրին և գեոդերային քաղաքականության մշակման և ներդրման բնագավառում արված են որոշ առաջարկություններ:

Աշխատանքն իրականացվել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների կողմից ք. Երևանի 1500 տնային տնտեսությունների շրջանում 2004թ. անցկացված քանակական սոցիոլոգիական հետազոտության, ինչպես նաև 2005թ. հեղինակի կողմից անցկացված որակական սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա:

Աշխատանքը կազմված է 3 գլուխներից և ամփոփումից:

1. Աշխատանքի նպատակները, խնդիրները և մեթոդաբանությունը:
2. Սոցիալական գործընթացների գեոդերային բնութագրիչները փոխակերպվող հայ հասարակությունում:
3. Բնակչության պատկերացումները հասարակությունում գեոդերային փոխհարաբերությունների վերաբերյալ:

Առաջին գլխում ներկայացված են աշխատանքի նպատակները, խնդիրները և մեթոդաբանությունը:

Երկրորդ գլուխը՝ «Սոցիալական գործընթացների գեներային բնութագրիչները փոխակերպվող հայ հասարակությունում», ամբողջությամբ նվիրված է հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների կողմից 2004թ. անցկացված տնային տնտեսությունների սոցիոլոգիական հետազոտության տվյալների գեներային վերլուծությանը:

2.1 «Կրթություն» ենթաբաժնում ներկայացված են ՀՀ կրթահամակարգի տարբեր մակարդակներում կրթություն ստացող կանանց և տղամարդկանց սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները, դիտարկված են այն հիմնական գործոնները, որոնք պայմանավորում են կրթական շարժունության հնարավորությունները երկու սեռերի ներկայացուցիչների համար:

2.2 «Ձրադվածություն» ենթաբաժինը նվիրված է հարցվողների տնտեսական կարգավիճակի ուսումնասիրությանը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել կանանց և տղամարդկանց տնտեսական ակտիվության գնահատմանը, ինչպես նաև երկու սեռերի ներկայացուցիչների ներգրավվածությանը պետական, մասնավոր և հասարակական հատվածներում:

2.3 «Բարեկեցության մակարդակ» ենթաբաժնում դիտարկված է կանանց և տղամարդկանց մասնակցությունն ընտանիքի բյուջեի ձևավորման գործընթացում, ինչպես նաև քննարկված են երկու սեռերի ներկայացուցիչների սոցիալական նույնականացման խնդիրները և պատկերացումները տնային տնտեսության տնտեսական վիճակի դինամիկայի վերաբերյալ:

2.4 «Բարոյական նորմեր/հանդուրժողականություն» ենթաբաժնում վերլուծված են Հայաստանում կանանց և տղամարդկանց համար սոցիալապես ընդունելի և անընդունելի վարքի վերաբերյալ հարցվողների դիրքորոշումները և ներկայացված է հայ հասարակությունում տարբեր խմբերի և փոքրամասնությունների նկատմամբ երկու սեռերի ներկայացուցիչների հանդուրժողականության աստիճանը:

2.5 «Քաղաքական հայացքներ և քաղաքական վարքագիծ» ենթաբաժնում համեմատվում են կանանց և տղամարդկանց քաղաքական վարքագիծը, հայացքները և դիրքորոշումները: Առանձնահատուկ ուշադրության է արժանացել նաև երկրում տեղի ունեցող լայնածավալ զարգացումների վերաբերյալ երկու սեռերի ներկայացուցիչների պատկերացումների դիտարկումը: Քաղաքական վարքին և հայացքներին վերաբերող բաժնում դիտարկված է նաև մեր հասարակությունում գործող հիմնական սոցիալական ինստիտուտների նկատմամբ կանանց և տղամարդկանց վստահության մակարդակը և հարցվողների պատկերացումները տարածաշրջանում Հայաստանի ռազմավարական դերի մասին:

2.6 «Արտաքին միգրացիա» ենթաբաժնում ներկայացված է արտաքին միգրացիոն գործընթացների համառոտ գենդերային վերլուծությունը, մասնավորապես կանանց և տղամարդկանց ներգրավվածությունը միգրացիոն գործընթացներում, արտասահման մեկնելու հիմնական պատճառները և նպատակները, էմիգրացիայի ընթացքում աշխատանքի բնույթը, պայմանները, արտասահմանում սոցիալական երաշխիքներ ունենալու հնարավորությունները և այլն: Գնահատված է նոտակա տարիներին կանանց և տղամարդկանց արտաքին միգրացիայի պոտենցիալի մակարդակը:

Երրորդ գլխում «Բնակչության պատկերացումները հասարակությունում գենդերային փոխհարաբերությունների վերաբերյալ» ներկայացված են Երևանում և Տավուշի մարզում անցկացված որակական սոցիոլոգիական հետազոտության արդյունքները, որոնք վերաբերում են հայ հասարակությունում գենդերային հավասարության մասին պատկերացումներին, կանանց կարգավիճակի բարձրացմանը խոչընդոտող գործոններին և գենդերային հավասարության ապահովման հեռանկարներին:

Աշխատանքն ավարտվում է եզրակացությունով, որտեղ ամփոփվում են հիմնական արդյունքները և ներկայացվում են հայ հասարակության զարգացման արդի փուլում սոցիալական շերտավորման առավել կարևոր գենդերային տարբերությունները:

Գլուխ առաջին

Աշխատանքի նպատակները, խնդիրները և մեթոդաբանությունը

Գեոդերային շերտավորումը հանդիսանում է սոցիալական շերտավորման տարատեսակ և սահմանվում է որպես հասարակության բնութագրիչ, որի համաձայն՝ տարբեր սոցիալական խմբեր (այս պարագայում կանայք և տղամարդիկ) ունեն կայուն տարբերություններ, որոնք էլ անհավասար հնարավորությունների պատճառ են դառնում: Գեոդերային շերտավորման կոնցեպցիայի համաձայն, անկախ երկրի զարգացվածության աստիճանից՝ կանայք և տղամարդիկ սոցիալական շերտավորման համակարգում ունեն տարբեր կարգավիճակներ: Հիմնականում կանայք ունեն ավելի ցածր սոցիալական կարգավիճակ, վաստակում են ավելի քիչ գումար և ունեն ավելի փոքր իշխանություն, քան տղամարդիկ:

Վերջին տասնամյակների ընթացքում երկրում տեղի ունեցող սոցիալ-կառուցվածքային փոփոխությունները հանգեցրին ոչ միայն մինչ այդ գոյություն չունեցող սոցիալական շերտերի առաջացմանը, այլ նաև սոցիալական շերտավորման և մոբիլության գործընթացների որակապես նոր ասպեկտների և առանձնահատկությունների ձևավորմանը: Վերոնշյալն ուղեկցվում է Հայաստանում տղամարդկանց և կանանց դերի և ստատուսի փոփոխություններով, և մեր հասարակությունում կնոջ դերի վերանայման անհրաժեշտություն է առաջանում:

Ժամանակակից հայ հասարակության շերտավորման համակարգը բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով, որոնցից առավել հատկանշական են հետևյալները՝

- Ժամանակակից հայ հասարակության շերտավորման համակարգը բնութագրվում է անկայունությամբ և անորոշությամբ:
- Նոր սոցիալական համակարգի կայացումը կապված է զանգվածային ռեսոցիալականացման և մարզինալիզացման, ինքնանույնականացման փոփոխության և նույնիսկ խմբերի՝ մի սոցիալական շերտից մյուսը տեղաշարժերի հետ:

- Նոր ստրատիֆիկացիոն համակարգը բնորոշվում է սոցիալական բևեռացման խորացմամբ և Ջինիի գործակցի բարձր արժեքներով:
- Հայ հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխություններն ուղեկցվում են «հաջողություն», «բարձր կարգավիճակ» հասկացությունների գնահատման չափանիշների փոփոխությամբ:
- Ժամանակակից հայ հասարակության սոցիալական շարժունության առանձնահատկությունը կայանում է վարընթաց սոցիալական շարժունության գերակայությամբ: Ընդ որում, վարընթաց շարժունությունը ոչ թե առանձին անհատների, այլ ամբողջ խմբերի սոցիալական կարգավիճակի իջեցման հետևանք է:
- Սոցիալական շարժունության նոր գործընթացը բնորոշվում է քաղաքական և տնտեսական կարգավիճակների սերտ կապով, և միևնույն ժամանակ մասնագիտական-կրթական կարգավիճակի զգալի արժեզրկմամբ:
- Ընդհանուր առմամբ, վարընթաց սոցիալական շարժունությունն ավելի բնորոշ է կանանց, քան տղամարդկանց: Ավելին, այսօր մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, ըստ էության, սահմանափակում են կանանց վերընթաց սոցիալական շարժունությունը:

Տվյալ աշխատանքի նպատակն է *գենդերային տեսանկյունից վերլուծել ժամանակակից հայ հասարակության սոցիալական շերտավորումը քաղաքական, տնտեսական և կրթական առանցքներով, բնութագրել գենդերային հավասարության վերաբերյալ բնակչության դիրքորոշումները և տալ առաջարկություններ գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ:*

Իրականացված հետազոտության հիմնական *խնդիրներն են`*

- Հայաստանում կանանց և տղամարդկանց սոցիալ-տնտեսական կարգավիճակի տարբերությունների բացահայտումը:
- Հայաստանում կանանց և տղամարդկանց քաղաքական կարգավիճակի տարբերությունների բացահայտումը:
- Կանանց և տղամարդկանց համար կրթության մատչելիության ուսումնասիրությունը ժամանակակից հայ հասարակությունում:
- Արտաքին միգրացիոն գործընթացների գենդերային վերլուծությունը:
- Ժամանակակից հայ հասարակության վերաբերմունքի բացահայտումը գենդերային իրավահավասարության և կանանց առաջընթացի նկատմամբ:

- Ժամանակակից հայ հասարակությունում գենդերային անհավասարության պատճառների և գործոնների վերլուծությունը:
- Գենդերային հավասարության ապահովման բնագավառում առաջարկությունների մշակումը:

Աշխատանքի մեթոդաբանությունը կազմել է միջսեռային համեմատական վերլուծությունը, որն իրականացվել է ՅՈՒՆԿԵՍ-ի կողմից անկացված տնային տնտեսությունների տվյալների բազայի վերլուծության հիման վրա¹: Ֆոկուս-խմբերի միջոցով հավաքագրված որակական ինֆորմացիայի վերլուծությունը հիմք է հանդիսացել բնակչության գենդերային դիրքորոշումների բացահայտման համար: Ընդհանուր առմամբ անց են կացվել քննարկումներ ութ ֆոկուս-խմբերում. չորսը Երևանում, և չորսը՝ Տավուշի մարզում (երկուսը ք.Իջևանում, մեկը՝ Սեվ Բար գյուղում, մյուսը՝ Թովուզ գյուղում):

Կանանց և տղամարդկանց տարբեր տարիքային խմբերը ներկայացված էին հավասարաչափ:

¹ Մշակումները անց են կացվել SPSS համակարգչային ծրագրով:

Գլուխ երկրորդ
Սոցիալական գործընթացների գենդերային բնութագրիչները
փոխակերպվող հայ հասարակությունում

Տվյալ բաժնում ներկայացված արդյունքները հիմնված են Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների կողմից 2004թ. անցկացված տնային տնտեսությունների քանակական սոցիոլոգիական հետազոտության տվյալների գենդերային վերլուծության վրա²: Վերլուծությունն իրականացվել է ըստ ՀՌԿԿ-ի կողմից մշակված հարցաթերթի հետևյալ բաժինների՝

- D. Ժողովրդագրություն
- E. Կրթություն
- M. Միգրացիա
- H. Առողջապահություն
- P. Քաղաքական Վարք/Հայացքներ
- S. Սոցիալական ինստիտուտներ
- C.Տնտեսական վիճակ

² Ուսումնասիրվող համակցությունում կանայք կազմել են 62.8% (942 մարդ), տղամարդիկ 32.8% (558 մարդ):

2.1. Կրթություն

Տվյալ ենթաբաժնի վերլուծության հիմնական նպատակն է հետազոտել տղաների և աղջիկների ընդգրկվածության աստիճանն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև, երկու սեռերի համար կրթություն ստանալու հիմնական նպատակները և հեռանկարները:

Վերլուծելով հարցաթերթի՝ կրթությանը վերաբերող բաժինը՝ մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել հարցվողների ներկա կրթական մակարդակին, սովորողների որոշ սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներին, ինչպես նաև փորձել ենք դիտարկել այն հիմնական գործոնները, որոնք պայմանավորում են կրթական շարժունության հնարավորությունները մեր հասարակությունում:

Աղյուսակ 2.1. Հարցվողների կրթական մակարդակն ըստ սեռի³ (% ամբողջի մեջ)

Կրթություն	Տղամարդ	Կին
<i>Չունի տարրական</i>	0.4	0.7
<i>Տարրական</i>	1.0	0.6
<i>Թերի միջնակարգ</i>	5.8	5.1
<i>Միջնակարգ</i>	29.7	28.0
<i>Միջին-մասնագիտական</i>	23.3	20.5
<i>Թերի բարձրագույն</i>	3.3	6.6
<i>Բարձրագույն</i>	35.4	37.5
<i>Հետբարձրագույն</i>	1.1	1.0
<i>Այլ</i>	-	-
Ընդամենը	100.0	100.0

Հարցվողների գերակշռող մասը (92.4%) ներկայումս ներգրավված չէ որևէ ուսումնական հաստատությունում և չի հաճախում ուսումնական-մասնագիտական վերապատրաստման որևէ դասընթաց:

³ Հաշվառված է միայն չափահաս /18+/ կանանց և տղամարդկանց կրթական մակարդակը:

Ուսումնական ծրագրերում ընդգրկված չլինելու հիմնական պատճառը, հարցվողների մեծ մասի կարծիքով՝ տարիքն է և բավարարվածությունը առկա կրթությամբ:

Սովորողների մեծ մասն ուսանում է բուհերում (տղամարդկանց 74.5%-ը և կանանց 73.0%-ը), ընդ որում, տղամարդկանց 15.7%-ը և կանանց 9.5%-ը ուսանում են ասպիրանտուրայում:

Բավականին հետաքրքիր տարբերություններ են նկատվում այն հարցում շուրջ, թե ինչպես են կանայք և տղամարդիկ հոգում ուսման հետ կապված ծախսերը: Այսպես, հետազոտության արդյունքները վկայում են, որ սովորող աղջիկների մեծ մասի ուսման ծախսերը հոգում են ընտանիքի այլ անդամները, իսկ տղաները որոշ չափով կարողանում են հոգալ վերոնշյալ ծախսերն ինքնուրույն (այսպես, աղջիկների ընդամենը 3.2%-ը և տղաների 13.7%-ը հոգում են ուսման ծախսերն ինքնուրույն):

Աղյուսակ 2.2. Տվյալ հաստատությունում ուսանելու առավել կարևոր նպատակներն ըստ սեռի և տարիքի (% ամբողջի մեջ)

Ուսանելու նպատակները	Մինչև 20 տարեկան		21-25		26-35	
	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.
Ղիպլում ստանալը	25.0	6.1	9.5	15.8	-	11.1
Զինծառայությունից խուսափել, այն հետաձգել	4.2	-	-	-	-	-
Ընտանեկան ավանդույթ է	-	-	4.8	5.3	-	11.1
Հաջող կարիերա ունենալ Հայաստանում	37.4	18.2	28.6	10.5	25.0	44.5
Սերը մասնագիտության նկատմամբ	29.2	57.5	42.7	52.6	50.0	11.1
Լավ աշխատանք գտնել արտասահմանում	4.2	12.2	4.8	15.8	-	11.1
Հրաժարվել են պատասխանել	-	6.0	9.6	-	25.0	11.1
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Ինչպես երևում է աղյուսակ 2.2-ից, մինչև 20 տարիքային խմբում ղիպլում ստանալը՝ որպես նպատակ, նշվել է ուսանող տղաների 25.0%-ի և ընդամենը

ուսանող աղջիկների 6.1%-ի կողմից, սակայն արդեն 21-25 տարիքային խմբում աղջիկների մոտ 16.0%-ը նշել է, որ կրթական համակարգում ընդգրկված լինելու հիմնական դրդապատճառը դիպլոմ ստանալն է:

Նկատելի է բավականին հետաքրքիր միտում. կախված տարիքից՝ կրճատվում է այն տղամարդկանց քանակը, ովքեր ուսանում են՝ Հայաստանում հաջող կարիերա ունենալու նպատակով: Այսպես, եթե մինչև 20 տարեկան տարիքային խմբում այդ պատճառը նշվել է տղամարդկանց 37.4%-ի կողմից, 21-25 տարիքային խմբում՝ 28.6%, ապա արդեն 26-35 տարիքային խմբում ընդամենը 25.0%-ի կողմից: Լիովին հակառակ պատկեր է նկատվում կանանց պարագայում. մինչև 20 տարեկան աղջիկների միայն 18.2%-ն է նշել, որ ուսանում է Հայաստանում հաջող կարիերա ունենալու համար, 21-25 տարեկանների խմբում այդ թիվը կազմում է ընդամենը 10.5%, իսկ արդեն 26-35 տարեկանների խմբում՝ 44.5%:

Ինչպես երևում է աղյուսակ 2.2.-ից, տարիքն ազդում է նաև մասնագիտության նկատմամբ դիրքորոշումների ձևավորման վրա, ընդ որում, այստեղ ևս նկատելի են զգալի գենդերային տարբերություններ: Այսպես, եթե մինչև 20 տարեկան տղաների 29.2%-ը նշել է, որ սիրում է իր մասնագիտությունը, ապա նույն տարիքային խմբում նման պատասխան է տվել կանանց մոտ 60%-ը: Պատկերը կտրուկ փոխվում է 26-35 տարեկանների շրջանում, քանի որ այստեղ արդեն տղամարդկանց 50.0%-ը համարում է, որ ուսանելու հիմնական նպատակը սերն է տվյալ մասնագիտության նկատմամբ: Նույն կարծիքին է կանանց ընդամենը 11.1%-ը: Կանայք ավելի շատ են հակված արտասահմանում լավ աշխատանք գտնելու մտքին: Սրա մասին են վկայում հետազոտություն արդյունքները, ըստ որոնց՝ երիտասարդ կանանց գրեթե 30%-ի համար ուսանելու հիմնական նպատակն արտասահմանում աշխատանք գտնելն է: Տղամարդկանց միայն 8.9%-ն է հետամուտ այս նպատակին:

Ընդհանուր առմամբ, ուսանելու վերաբերյալ որոշումը թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ կայացրել են ինքնուրույն: Հարցվողների միայն 3.5%-ի դեպքում է, որ որոշումը կայացրել են ծնողները:

Որոշ գենդերային տարբերություններ են արձանագրվել նաև այն հարցի ընկալման շուրջ, թե արդյոք ուսումն ավարտելուց հետո հարցվողներն աշխատանք կգտնեն Հայաստանում, թե՛ ոչ: Այսպես, կանայք ընդմահուր առմամբ ավելի լավատեսորեն են տրամադրված. կանանց 74.0%-ը կարծում է, որ կգտնի աշխատանք իր մասնագիտությամբ, մինչդեռ, նույն կարծիքին է տղամարդկանց ընդամենը 60.7%-ը:

Հարցվողների զգալի մասի կարծիքով՝ այսօր Հայաստանում աշխատանք գտնելու ամենակարևոր նախադրյալ է հանդիսանում կապերի և ծանոթությունների առկայությունը (այդպես է կարծում տղամարդկանց 34.7% և կանանց 34.3%-ը), որպես երկրորդ կարևոր գործոն նշվել է փողի առկայությունը (այդ կարծիքին է տղամարդկանց 19.3% և կանանց 15.9%-ը), իսկ հետո արդեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են կրթությունը (12.0% և 15.5%), մասնագիտական պատրաստվածությունը և տաղանդը (11.3% և 11.9%) և այլն (տե՛ս աղյուսակ 2.3):

Ջարմանալիորեն ցածր է գնահատվել աշխատանքային փորձի առկայությունը (այդ գործոնն ընտրել է տղամարդկանց միայն 4.6% և կանանց 5.7%-ը):

Աղյուսակ 2.3. Հայաստանում աշխատանք գտնելու ամենակարևոր գործոնների վերաբերյալ կանանց և տղամարդկանց պատկերացումները (% ամբողջի մեջ)

Գործոններ	Տղամարդ	Կին
Պատահականություն	2.5	1.8
Աշխատասիրություն	9.8	9.1
Կրթություն	12.0	15.5
Կապեր կամ ծանոթություններ	34.7	34.3
Մասնագիտական պատրաստվածություն/տաղանդ	11.3	11.9
Աշխատանքային փորձ	4.6	5.7
Փող	19.3	15.9
Այլ (առողջություն, երիտասարդություն և ցանկություն)	5.8	7.6
Ընդամենը	100.0	100.0

Հայաստանում աշխատանք գտնելու ամենակարևոր գործոնների հարցի վերաբերյալ տարբեր կրթական մակարդակ ունեցող կանանց և տղամարդկանց կարծիքները խիստ տարբեր են:

Աղյուսակ 2.4. Հայաստանում աշխատանք գտնելու ամենակարևոր գործոնների վերաբերյալ պատկերացումներն ըստ սեռի և կրթամակարդակի (% ամբողջի մեջ)

Գործոցներ	Թերի միջնակարգ		Միջնակարգ		Միջին-մասնագիտական և բարձրագույն		Հետբարձրագույն	
	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.
Պատահականություն		3.3	2.6	0.8	2.9	2.1		
Աշխատասիրություն	8.3	18.0	16.1	11.2	11.8	10.3	25.0	
Կրթություն	8.3	18.0	12.3	16.3	14.1	19.8	12.5	25.0
Կապեր կամ ծանոթություններ	61.1	27.9	35.5	37.1	41.6	40.2	37.5	62.5
Մասնագիտական պատրաստվածություն, տաղանդ	5.6	8.2	8.4	7.2	9.4	13.2	25.0	
Աշխատանքային փորձ	-	1.6	4.5	3.1	1.5	2.2		
Փող	13.9	18.0	14.8	16.7	13.3	7.6		
Այլ (առողջություն, երիտասարդություն և ցանկություն)	2.8	5.0	5.8	7.6	5.4	4.6		12.5
<i>Ընդամենը</i>	<i>100.0</i>	<i>100.0</i>	<i>100.0</i>	<i>100.0</i>	<i>100.0</i>	<i>100.0</i>	<i>100.0</i>	<i>100.0</i>

Այսպիսով, չնայած այն բանին, որ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց մեծ մասը համոզված է, որ առաջնային գործոնը համապատասխան սոցիալական կապիտալի, այսինքն ծանոթությունների և կապերի առկայությունն է՝ այդ կարծիքին հիմնականում հակված են թերի միջնակարգ կրթություն ունեցող տղամարդիկ (61.1%) և հետբարձրագույն կրթությամբ կանայք (62.5%): Հարկ է նշել նաև, որ այլ գործոնների թվին (այսինքն այն գործոնները, որոնք ընտրել են հենց իրենք հարցվողները) պատկանում են առողջությունը, երիտասարդ լինելու փաստը և աշխատանք ունենալու ցանկությունը: Ընդ որում, առողջությունը՝ որպես աշխատանք ունենալու նախադրյալ, առավելապես կարևորել են հետբարձրագույն կրթություն ունեցող կանայք:

2.2. Ջրաղվածություն

Տվյալ բաժնուն գեներային վերլուծության են ենթարկվել հարցվողների ներկայիս զբաղվածությունը և գործազրկության հիմնական պատճառները:

Տնտեսական կարգավիճակը, հանդիսանալով սոցիալական կարգավիճակի կարևորագույն բաղադրիչ, բնութագրվում է անհատի աշխատանքի եկամտաբերությամբ: Աղյուսակ 2.5-ը հնարավորություն է տալիս վերլուծել հարցվողների զբաղվածությունն ըստ սեռի և տարիքի:

Աղյուսակ 2.5. Կանանց և տղամարդկանց զբաղվածությունն ըստ տարիքային խմբերի

<i>Տղամարդիկ (% ամբողջի մեջ)</i>								
Հիմնական զբաղմունքը	18-20	21-25	26-35	36-45	46-55	56-65	66 և բարձր	Ընդամենը
Վարձու աշխատող մասնավոր ոլորտում	8.3	28.1	29.7	26.3	24.6	15.8	3.3	19.9
Վարձու աշխատող պետական ոլորտում	2.1	25.0	28.7	28.6	26.3	21.0	7.7	21.9
Վարձու աշխատող միջազգային կազմակերպությունում	-	-	1.9	2.2	0.8	-	-	0.9
Ինքնազբաղ	5.6	6.3	16.8	14.3	13.6	1.8		9.7
Գործատու	1.6	2.9	3.3	4.2	-	-	-	2.1
Գործազուրկ, աշխատանք է փնտրում	11.1	12.5	15.8	20.0	26.3	15.8	1.1	15.8
Սովորում է	65.7	23.2	0.9	-	-	-	-	7.2
Թոշակառու, հաշմանդամ	-	-	1.9	4.4	4.2	38.6	85.7	19.0
Չի աշխատում, աշխատանք չի փնտրում	5.6	2.0	1.0	-	4.2	7.0	2.2	3.5
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
<i>Կանայք (% ամբողջի մեջ)</i>								

Հիմնական զբաղմունքը	16-20	21-25	26-35	36-45	46-55	56-65	66 և բարձր	Ընդամենը
Վարձու աշխատող մասնավոր ոլորտում	2.4	17.4	15.5	15.5	12.6	4.1	1.7	10.3
Վարձու աշխատող պետական ոլորտում	2.4	11.6	20.1	21.4	27.9	19.1	2.8	17.0
Վարձու աշխատող միջազգային կազմակերպությունում	--	1.5	1.2	1.1	1.1	-	1.1	0.9
Ինքնազբաղ	2.4	-	5.4	4.1	2.7	1.6	0.6	2.6
Գործատու	-	-	0.6	1.1	-	-	-	0.3
Գործազուրկ, աշխատանք է փնտրում	7.1	15.9	15.7	30.5	33.9	12.4	-	18.4
Սովորում է	73.8	24.6	1.5	0.5	-	-	-	5.4
Թոշակառու, հաշմանդամ	-	2.9	-	2.9	4.9	53.7	93.8	26.0
Չի աշխատում, աշխատանք չի փնտրում	11.9	26.1	40.9	22.9	16.9	9.1	-	19.1
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Ինչպես երևում է աղյուսակ 2.5-ից, տղամարդկանց տնտեսական ակտիվությունը՝ համեմատած կանանց տնտեսական ակտիվության հետ, բավականին բարձր է, և գրեթե բոլոր ոլորտներում տղամարդկանց ներգրավվածությունը զգալիորեն գերակշռում է: Այսպես, տղամարդկանց 41.8%-ը պետական և մասնավոր ոլորտների վարձու աշխատող է, մինչդեռ նույն ոլորտներում զբաղված կանանց բաժինը 15 տոկոսային կետով ավելի պակաս է: Ինքնազբաղ են տղամարդկանց 9.6%-ը և կանանց ընդամենը 2.6%-ը:

Կանայք համեմատաբար ավելի մեծ տոկոս են կազմում գործազուրկների ընդհանուր թվի մեջ, ինչպես նաև, ըստ ստացված արդյունքների, կանայք 1.3 անգամ ավելի շատ են թոշակառուների և հաշմանդամների ընդհանուր թվի մեջ: Առավել ուշագրավ է այն, որ աշխատանք չեն փնտրում չզբաղված տղամարդկանց ընդամենը 2.5%-ը և կանանց 18.4%-ը: Այս փաստը հավանաբար կարելի է մեկնաբանել ինչպես կանանց պասիվությամբ, այնպես էլ հասարակությունում դեռևս պահպանվող կարծրատիպերի առկայության փաստով, համաձայն որոնց՝ «կինը չպետք է աշխատի»: Վերոնշյալի մասին են վկայում նաև ֆոկլուս-խմբերի միջոցով անցկացված հարցազրույցների արդյունքները. ընդհանուր առմամբ, կանանց շրջանում նկատվում

է ակտիվություն, և կանանց զգալի մասը ցանկություն ունի մասնակցել երկրի քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքին (տե՛ս գլուխ 3):

Չգբաղված տղամարդկանց 45.6%-ը և կանանց 34.0%-ը չեն աշխատում, քանի որ չեն կարող աշխատանք գտնել, իսկ տղամարդկանց 37.7%-ը և կանանց 16.4%-ը չեն կարողանում պատշաճ վարձատրությամբ աշխատանք գտնել: Չափազանց մեծ տարբերություն է նկատվում այն հարցի շուրջ, թե ինչպես են ընտանեկան պատճառները սահմանափակում երկու սեռերի ներկայացուցիչների աշխատանքային ակտիվությունը: Այսպես, ընտանեկան պատճառներից ելնելով՝ չեն աշխատում չգբաղված կանանց 32.8%-ը և չգբաղված տղամարդկանց ընդամենը 1.9%-ը:

Աշխատանք չունենալու հիմնական պատճառները մեկնաբանելիս պետք է անդրադառնալ նաև կանանց և տղամարդկանց կրթական մակարդակին (տե՛ս աղյուսակ 2.6.):

Աղյուսակ 2.6. Աշխատանք չունենալու հիմնական պատճառներն ըստ սեռի և կրթամակարդակի (% ամբողջի մեջ)

Հիմնական պատճառը	Թերի միջնակարգ		Միջնակարգ		Միջին-մասնագիտական /բարձրագույն, հետբարձրագույն	
	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.
1. Չի կարող աշխատանք գտնել	66.6	47.1	50.0	37.6	40.0	31.5
2. Չի կարող պատշաճ վարձատրությամբ աշխատանք գտնել	33.4	17.6	28.1	12.8	45.0	18.7
3. Սովորում է	-	-	0.6	0.8	-	-
4. Ցանկություն չունի	-	-	6.3	9.4	3.3	5.9
5. Ընտանեկան կարգավիճակից բխող պատճառներ	-	17.6	-	31.6	3.3	35.4
6. Ֆիզիկապես անաշխատունակ է	-	17.7	12.0	5.1	3.3	4.9
7. Այլ	-	-	3.0	2.7	5.0	3.6
Ընդամենը	100	100	100	100	100	100

Հիմնական գեոդերային տարբերություններն արձանագրվել են միջնակարգ և թերի միջնակարգ կրթություն ունեցողների խմբերում. այսպես, մոտ 2 անգամ ավել թերի միջնակարգ և միջնակարգ կրթություն ունեցող տղամարդիկ չեն կարող ընդհանրապես աշխատանք գտնել (աշխատանք չեն կարողանում գտնել թերի միջնակարգ մասնագիտություն ունեցող կանանց 47.1%-ը և միջնակարգ կրթություն ունեցող կանանց 37.6%-ը), և ևս 33.4% թերի միջնակարգ և 28.1% միջնակարգ կրթություն ունեցող տղամարդիկ չեն կարողանում պատշաճ վարձատրությամբ աշխատանք գտնել: Այս փաստը, մեր կարծիքով, կարելի է բացատրել հետևյալով`

1. Թերի միջնակարգ և միջնակարգ կրթություն ունեցող տղամարդկանց պահանջարկն աշխատաշուկայում համեմատաբար ավելի ցածր է: Հնարավոր է, որ թերի միջնակարգ և միջնակարգ կրթություն ունեցող կանանց ավելի հեշտ է աշխատանք գտնել սպասարկման ոլորտում:

2. Թերի միջնակարգ և միջնակարգ կրթություն ունեցող կանայք ունեն հավակնությունների համեմատաբար ավելի ցածր մակարդակ:

Այս երևույթը առավել ցայտուն է արտահայտվում բարձրագույն կրթության մակարդակում: Միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների պարագայում նկատվելի է հետևյալ պատկերը. եթե տղամարդիկ, ովքեր համոզված են, որ չեն կարող աշխատանք գտնել, գերազանցում են կանանց 8.5 տոկոսային կետով, ապա նույն կրթությունն ունեցող այն տղամարդկանց քանակը, ովքեր չեն կարողանում պատշաճ վարձատրությամբ աշխատանք գտնել գերազանցում է կանանց 2.5 անգամ (45.0% և 18.7%` համապատասխանաբար):

Հետաքրքիր է այն, որ երկու խմբերում էլ` անկախ սեռից, չեն կարող աշխատանք գտնել թերի միջնակարգ կրթություն ունեցողները, իսկ պատշաճ վարձատրությամբ աշխատանք գտնելը դժվար է միջին-մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների համար:

2.3. Բարեկեցության մակարդակ

Այս բաժնի նպատակը կանանց և տղամարդկանց բարեկեցության մակարդակի ուսումնասիրությունն է, ինչպես նաև ընտանիքի բյուջեի ձևավորման հարցում կանանց մասնակցության գնահատումը մեր հասարակությունում: ՀՌԿԿ-ի կողմից մշակված հարցաթերթի համապատասխան հարցերի վերլուծության միջոցով գնահատվել է նաև կանանց և տղամարդկանց կողմից գլխավորվող տնային տնտեսությունների տնտեսական կարգավիճակի դինամիկան: Ըստ ստացված տվյալների, թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց գրեթե 80.0%-ը քաջատեղյակ է իրենց ընտանիքների եկամուտների և ծախսերի ձևավորման գործընթացին: Ընդ որում,

առավել լավատեղյակ են թերի միջնակարգ կրթություն ունեցող տղամարդիկ և կանայք, ինչպես նաև հետբարձրագույն կրթություն ունեցող կանայք (տե՛ս աղյուսակ 2.7):

Աղյուսակ 2.7. Տեղեկացվածությունն ընտանիքի եկամուտների և ծախսերի ձևավորման գործընթացից (% ամբողջի մեջ)

Տեղեկացվածության աստիճանը	Թերի միջնակարգ		Միջնակարգ		Միջին-մասնագիտական և բարձրագույն	
	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.
Լավատեղյակ է	82.5	86.9	80.1	77.6	80.4	81.6
Որոշ չափով տեղյակ է	15.0	11.5	17.4	19.3	17.3	16.9
Տեղյակ չէ	2.5	1.6	2.5	3.1	2.3	1.5
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Գենդերային որևէ նշանակալից տարբերություններ չեն նկատվում ընտանիքի բարեկեցության մակարդակի գնահատման հարցում: Այսպես, տղամարդկանց 45.7%-ը և կանանց 45.5%-ը իրենց ներկայիս բարեկեցության մակարդակը գնահատում են որպես «բավարար», 30.6%-ը և 25.8%-ը՝ համապատասխանաբար, որպես «վատ», և ևս 15.1%-ը և 20.7%-ը՝ որպես «չատ վատ»:

Արտահայտված տարբերություններ չեն նկատվել նաև սոցիալական նույնականացման հարցի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, բնակչության 48.9%-ը նույնացնում է իրեն միջին խավի հետ (տե՛ս աղյուսակ 2.8):


Աղյուսակ 2.8. Տնային տնտեսությունների բաշխվածությունն ըստ սոցիալական ինքնանույնականացման (% ամբողջի մեջ)


Սոցիալական խավ	Տղամարդ	Կին
Առավել ցածր խավ	9.9	13.2
Միջինից ցածր	34.1	29.9
Միջին խավ	47.1	50.8
Միջինից բարձր խավ	8.9	5.7

Առավել բարձր խավ	-	0.4
Դժվարանուն պատասխանել	-	-
Ընդամենը	100.0	100.0

Հարցվողների զգալի մասը (մոտ 40%-ը) գտնում է, որ իրենց ընտանիքի բարեկեցության մակարդակը վերջին 3 տարիների ընթացքում վատացել է, ևս 30%-ը կարծում է, որ վիճակը մնացել է նույնը, և գրեթե նույն թվով հարցվողներ էլ գտնում են, որ իրենց ընտանիքի բարեկեցության մակարդակը բարելավվել է (տե՛ս գծապատկեր 2.1.):



Գծապատկեր 2.1. Տնային տնտեսության տնտեսական վիճակի փոփոխության մասին պատկերացումները վերջին երեք տարիների վերաբերյալ





Հարցվողների կեսը դժվարանում է որևէ կանխատեսում անել ապագայի վերաբերյալ (հարցվողների 50%-ը հարցին դժվարացել է պատասխանել): Զետաբրքիր է այն, որ կանայք ավելի լավատեսորեն են տրամադրված մոտ ապագայի նկատմամբ, իսկ տղամարդիկ բարվոք են տեսնում հեռավոր ապագան: Այսպես, կանանց 21.5%-ի և տղամարդկանց 16.3%-ի կարծիքով՝ մեկ տարի հետո իրենց տնային տնտեսության բարեկեցության մակարդակը կբարելավվի, իսկ տղամարդկանց 26.5%-ը և կանանց 20.6%-ը առավել հավանական են համարում իրենց տնային տնտեսության տնտեսական վիճակի բարելավումը երեք տարի հետո (տե՛ս գծապատկեր 2.2.):

Գծապատկեր 2.2. Տնային տնտեսության տնտեսական վիճակի փոփոխությունների անկնալիքները առաջիկա երեք տարիներից



Ընդհանուր առմամբ, կանայք համեմատաբար ավելի հոռետեսորեն են տրամադրված և հակված են դրսևորել պասիվ վարք այն պարագայում, եթե սոցիալ-տնտեսական վիճակը երկրում առաջիկա երեք տարիների ընթացքում չբարելավվի:

Այսպես, կանանց բաժինը, ովքեր կարծում են, որ հազիվ թե կարողանան որևէ բան փոխել իրենց կյանքում, մոտ 2 անգամ գերազանցում է նույն կարծիքն ունեցող տղամարդկանց բաժինը: Ավելին, այն կանանց բաժինը, ովքեր միանշանակ համոզված են, որ չեն փորձի առավել եկամտաբեր աշխատանք գտնել, 1.5 անգամ ավել է, քան նույն կարծիքն ունեցող տղամարդկանցը:

Այս երևույթը դժվար է մեկնաբանել, քանի որ այն հակասում է անցումային շրջանում արձանագրված հակառակ բնույթի բազմաթիվ փաստերի, երբ կանայք դրևորում էին առանձնահատուկ ճկունություն, կենսունակություն և նախաձեռնություն:

2.4. Բարոյական նորմեր / հանդուրժողականություն

Այս բաժնում վերլուծության են ենթարկվել կանանց և տղամարդկանց համար սոցիալապես ընդունելի և անընդունելի վարքի վերաբերյալ հարցվողների դիրքորոշումները, ինչպես նաև դիտարկվել է մեր հասարակությունում տարբեր խմբերի և փոքրամասնությունների նկատմամբ երկու սեռերի ներկայացուցիչների հանդուրժողականության աստիճանը:

Բավականին հետաքրքիր տարբերություններ են արձանագրվել կանանց և տղամարդկանց համար ընդունելի և անընդունելի վարքի վերաբերյալ հարցվողների դիրքորոշումների մեջ: Այսպես, հարցվողների 34.6%-ի կարծիքով՝ կանանց համար ընդհանրապես ընդունելի չէ թունդ ալկոհոլային խմիչքների օգտագործումը, այն ժամանակ, երբ տղամարդկանց համար նման վարքն ընդունելի չի համարում հարցվողների միայն 12.8%-ը: Ընդ որում, կանանց կողմից թունդ խմիչքների օգտագործումն ավելի ընդունելի է համարվում հենց կանանց կողմից: Այսպես, կանայք գրեթե հավասարաչափ անընդունելի են համարում թունդ խմիչքների օգտագործումը թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց կողմից, մինչդեռ տղամարդկանց 68.9%-ը կանանց վերոնշյալ վարքն անընդունելի է համարում, և իսկ տղամարդկանց համար՝ 31.1%-ը:

Նույնը կարելի է ասել ծխելու մասին. հարցվողների 88.1%-ը կանանց ծխելն ընդունելի չի համարում (տղամարդկանց համար՝ 56.4%):

Հարցվողների 67.2%-ը գտնում է, որ կանայք մինչև ամուսնանալը չպետք է ծնողներից առանձին ապրեն, մինչդեռ 58.4%-ը համոզված է, որ նման վարքն անընդունելի է նաև տղամարդկանց համար:

Գեղեցիկին զգալի տարբերություններ են նկատվում նաև առանց ամուսնանալու սեռական հարաբերություններ ունենալու փաստի վերաբերյալ հասարակության ընկալման մեջ: Այսպես, հարցվողների 72.0%-ը համարում է, որ այդ վարքը՝ անկախ

տարիքից, անընդունելի է կանանց համար, և 42.6%-ը նույն վարքը անընդունելի է համարում տղամարդկանց համար: Այստեղ ևս նկատելի են որոշ գեներային տարբերություններ, քանի որ տղամարդիկ զգալիորեն ավելի խստապահանջ են վերաբերում կանանց կողմից բարոյական նորմերի պահպանմանը, քան կանայք: Այսպես, եթե առանց ամուսնանալու կանանց սեռական հարաբերություններ ունենալն անընդունելի է համարում տղամարդկանց 74.6%-ը (տղամարդկանց համար անընդունելի է համարում տղամարդկանց 25.4%-ը), ապա կանանց համար այդ վարքն անընդունելի է գնահատվում կանանց 61.9 %-ի կողմից:

Նմանապես առանց ամուսնանալու հակառակ սեռի ներկայացուցչի հետ ապրելը կանանց համար անընդունելի է համարում հարցվողների 60.1%-ը, իսկ տղամարդկանց համար՝ 49.5%-ը :

Ինչպես երևում է աղյուսակ 2.9-ից, հարցվողների մեծ մասը՝ անկախ սեռից, առավել հաղործողականություն է ցուցաբերում աշխատանքային հարաբերությունների ոլորտում, բայց շատ ավելի քիչ հակված է հանդուրժող լինել հարևանի կամ ընկերոջ նկատմամբ: Միջինում կանայք ավելի հանդուրժող են միասեռականների նկատմամբ (կանանց 10.3% հանդուրժված է, որ ընկերություն կանի միասեռականների հետ, այն ժամանակ, երբ նույն հարցին դրական է պատասխանել տղամարդկանց միայն 3.6%-ը): Սակայն, ընդհանուր առմամբ, կանայք ավելի քիչ հանդուրժողականություն են դրսևորում թոքախտով հիվանդների և հարբեցողների նկատմամբ:

Աղյուսակ 2.9. Տղամարդկանց և կանանց վերաբերմունքը թվարկված մարդկանց խմբերի նկատմամբ (% ամբողջի մեջ)

Տղամարդիկ

	Կանեն ընկերություն			Կաշխատեն			Հարևանություն կանեն		
	Այո	Ոչ	Դ/Պ ⁴	Այո	Ոչ	Դ/Պ	Այո	Ոչ	Դ/Պ
1.ՁԻԱՅ-ով հիվանդներ	20.8	60.6	18.1	29.2	52.3	17.9	24.5	59.7	15.2
2. Թմրամուլներ	5.2	84.6	9.7	12.1	76.5	10.7	9.1	81.5	8.8
3. Արվամուլներ	3.6	85.3	10.6	11.8	76.3	11.3	6.8	82.1	10.6
4.Տուբերկուլյոզով հիվանդներ	17.4	64.7	17.4	23.3	59.3	16.9	19.4	64.3	15.7

⁴ Դ/Պ՝ դժվարացել են պատասխանել:

5. Ալկոհոլիկներ	17.7	71.9	9.9	25.9	63.3	10.2	22.4	67.7	9.3
------------------------	------	------	-----	------	------	------	------	------	-----

Կանայք

	Կանեն ընկերություն			Կաշխատեն			Հարևանություն կանեն		
	Այո	Ոչ	Դ/Պ	Այո	Ոչ	Դ/Պ	Այո	Ոչ	Դ/Պ
1. ՉԻԱՅ-ով հիվանդներ	19.4	64.2	16.1	26.8	54.9	18.1	24.2	63.1	12.5
2. Թմրամոլներ	5.5	87.3	7.1	12.3	76.3	11.2	8.6	84.7	6.5
3. Արվամոլներ	10.3	79.2	10.3	19.1	67.9	12.7	13.4	76.5	9.9
4. Տուբերկուլոզով հիվանդներ	13.8	69.9	16.0	19.5	62.2	18.1	16.8	68.5	14.4
5. Ալկոհոլիկներ	10.7	80.8	8.3	18.3	69.1	12.4	15.6	76.2	7.9

2.5. Քաղաքական հայացքներ և քաղաքական վարքագիծ

Տվյալ բաժնի վերլուծությունը թույլ տվեց պատկերացում կազմել ներկայումս մեր հասարակությունում կանանց և տղամարդկանց քաղաքական վարքի, հայացքների և դիրքորոշումների, ինչպես նաև քաղաքական վարքը ձևավորող գործոնների և դրանց վրա ազդող մեխանիզմների մասին: Տվյալների վերլուծության միջոցով հնարավոր դարձավ նաև դիտարկել տարածաշրջանում Հայաստանի ռազմավարական նպատակների և դերի մասին կանանց և տղամարդկանց տարբեր տարիքային խմբերի պատկերացումները:

Ընդհանուր առմամբ, թե՛ կանանց, և թե՛ տղամարդկանց քաղաքական և հասարակական ակտիվությունը բավականին ցածր է: Այսպես, վերջին 12 ամսվա ընթացքում հարցվողների մեծ մասը չի մասնակցել որևէ զանգվածային քաղաքական գործունեության, օրինակ, քաղաքական ցույցի, միթինգի կամ բողոքի:

Բացի ամնիջական մասնակցությունից, բնակչության մեծ մասի շրջանում հազվադեպ են քաղաքականության մասին զրույցները: Այսպես, տղամարդկանց 40.7%-ը և կանանց 42.0%-ը պատասխանել են, որ քաղաքականության մասին զրուցում են հազվադեպ, իսկ տղամարդկանց 18.8%-ը և կանանց 21.1%-ն

ընդհանրապես չի հետաքրքրվում քաղաքական թեմաներով և երբեք չի զրուցում քաղաքականության մասին: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հարցվողների մեծամասնությունն ապաքաղաքականացված է (տղամարդկանց 51.5%-ը և կանանց 61.8 %-ը):

Թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց շրջանում քաղաքականության մասին առավել հաճախ է զրուցում 66 տարեկան և ավելի տարիքային խումբը, իսկ բոլոր տարիքային խմբերից այս առումով համեմատաբար առավել պասիվ է 25-36 տարիքային խումբը: Քաղաքականությամբ ընդհանրապես հետաքրքրված չեն թերի միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցող կանայք և տղամարդիկ, իսկ առավել հետաքրքրված են հետբարձրագույն կրթություն ունեցող տղամարդիկ:

Սղյուսակ 2.10. Հետաքրքրվածությունը քաղաքականությամբ ըստ սեռի և կրթամակարդակի (% ամբողջի մեջ)

Քաղաքականությամբ հետաքրքրվածության աստիճանը	Թերի միջնակարգ		Միջնակարգ		Միջին-մասնագիտական և բարձրագույն		Հետբարձրագույն	
	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.
Այո, շատ է հետաքրքրում	22.5	19.7	19.3	17.2	23.4	21.6	50.0	25.0
Այո, երբեմն է հետաքրքրում	25.0	21.3	22.4	28.3	32.3	32.6	12.5	25.0
Հազվադեպ է հետաքրքրում	22.5	21.3	30.4	27.1	24.6	24.7	25.0	37.5
Բոլորովին չի հետաքրքրում	30.0	37.7	27.9	27.4	19.7	21.1	12.5	12.5
<i>Ընդամենը</i>	<i>100.0</i>		<i>100.0</i>		<i>100.0</i>		<i>100.0</i>	

Քաղաքական վարքի դրսևորման չափանիշներից մեկն է հանդիսասանում անհատի կամ խմբի մասնակցությունն ընտրություններին: Հաջորդ երկու աղյուսակներում ներկայացված են վերջին խորհրդարանական և նախագահական ընտրություններին մասնակցածների սեռա-տարիքային բնութագրիչները:

Աղյուսակ 2.11. Վերջին խորհրդարանական ընտրություններին մասնակցածների սեռա-տարիքային բաշխումը (% ամբողջի մեջ)

Մասնակցել է ընտրություններին	21-25		26-35		36-45		46-55		55-65		66-ից բարձր	
	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.
Այո	70.3	66.7	73.3	61.9	73.6	67.4	77.9	68.3	80.7	74.4	79.2	73.3
Ոչ	26.6	33.3	26.7	38.1	24.1	32.6	21.3	31.7	19.3	25.6	20.8	26.7
Հրաժարվել է պատասխանել	3.1	-	-	-	2.3	-	0.8	-	-	-	-	-
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղյուսակ 2.12. Վերջին նախագահական ընտրություններին մասնակցածների սեռա-տարիքային բաշխումը (% ամբողջի մեջ)

Մասնակցել է ընտրություններին	21-25		26-35		36-45		46-55		55-65		66-ից բարձր	
	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.
Այո	82.8	73.9	83.2	68.8	81.3	79.1	83.9	75.4	83.0	80.9	83.5	80.0
Ոչ	14.1	26.1	16.8	31.2	17.6	20.9	16.1	24.6	17.0	19.1	16.5	20.0
Հրաժարվել է պատասխանել	3.1	-	-	-	1.1	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Հարցվողների մեծ մասը բավականին հոռետես է երկրում տեղի ունեցող գործընթացների արդյունավետության վերաբերյալ: Այսպես, տղամարդկանց 47.5%-ի և կանանց 42.2%-ի կարծիքով՝ երկրում տեղի ունեցող զարգացումներն ընթանում են ոչ ճիշտ ուղղությամբ: Իսկ տղամարդկանց 22.9%-ի և կանանց 24.7%-ի կարծիքով՝ ներկայումս ընդհանրապես ոչ մի զարգացում տեղի չի ունենում: Ընդ որում, առավելապես վատատեսորեն են տրամադրված 56-66 տարեկան տղամարդիկ:

Այս հարցը դիտարկելով հարցվողների կրթության կտրվածքով՝ կարելի է նկատել հետևյալ միտումը. ավելի բարձր կրթական մակարդակ ունեցողներն ավելի լավատես են:

Աղյուսակ 2.13. Տղամարդկանց և կանանց պատկերացումները երկրում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ /ըստ տարիքային խմբերի/ (% ամբողջի մեջ)

Տղամարդիկ, %								
Ինչպե՞ս են ընթանում զարգացումները մեր երկրում	18-20	21-25	26-35	36-45	46-55	56-65	66 և բարձր	Ընդամենը
Ճիշտ ուղղությամբ	8.3	4.7	7.9	1.1	4.2	3.5	2.2	4.3
Հիմնականում ճիշտ ուղղությամբ	11.1	21.9	24.8	12.1	18.6	12.3	12.1	16.8
Ոչ մի ուղղությամբ	19.4	18.8	20.8	27.0	26.3	14.0	26.4	22.9
Հիմնականում ոչ ճիշտ ուղղությամբ	30.6	25.0	21.8	28.1	21.2	24.6	23.1	23.8
Սխալ ուղղությամբ	11.2	23.4	13.8	20.8	27.1	26.8	30.7	23.7
Դժվարանում են պատասխանել	19.4	6.2	10.9	10.9	2.5	18.8	5.5	8.5
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Կանայք, %								
Ինչպե՞ս են ընթանում զարգացումները մեր երկրում	18-20	21-25	26-35	36-45	46-55	56-65	66 և բարձր	Ընդամենը
Ճիշտ ուղղությամբ	7.1	1.5	4.4	4.8	2.7	0.8	5.0	3.7
Հիմնականում ճիշտ ուղղությամբ	19.1	34.8	24.4	23.5	16.4	19.8	13.3	20.5
Ոչ մի ուղղությամբ	16.7	28.9	18.1	22.5	29.5	26.4	25.0	24.7
Հիմնականում ոչ ճիշտ ուղղությամբ	35.7	14.5	27.5	20.3	24.0	20.7	20.6	22.6
Սխալ ուղղությամբ	-	12.6	13.8	19.3	24.7	23.9	25.5	19.6
Դժվարանում են պատասխանել	21.4	7.7	11.8	9.6	2.7	8.4	10.6	8.9
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղյուսակ 2.14. Տղամարդկանց և կանանց պատկերացումները երկրում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ (ըստ կրթական մակարդակի) (% ամբողջի մեջ)

Ինչպե՞ս են ընթանում զարգացումները մեր երկրում	Թերի միջնակարգ		Միջնակարգ		Միջին-մասնագիտական և բարձրագույն /հետբարձրագույն	
	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.
Ճիշտ ուղղությամբ	2.7	3.7	5.3	4.6	4.8	3.9
Հիմնականում ճիշտ ուղղությամբ	8.1	9.3	5.3	16.3	22.9	27.0

Ոչ մի ուղղությամբ	29.7	29.6	28.0	29.6	23.9	24.9
Հիմնականում ոչ ճիշտ ուղղությամբ	29.7	18.5	24.7	24.1	26.5	25.7
Սխալ ուղղությամբ	37.9	38.9	30.0	25.4	21.9	21.9
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Մեր երկրի համար գերակայությունների հարցի շուրջ ընդգծված գեներային տարբերություններ չեն նկատվել. հարցվողերի գերակշռող մասը գտնում է, որ դա աղքատության և գործազրկության կրճատումն է:

Աղյուսակ 2.15. Հայաստանի համար ամենակարևոր նպատակների գեներային վերլուծությունը (% ամբողջի մեջ)

Գերակայություններ	Տղամարդ	Կին
1. Աղքատության կրճատում	18.3	21.8
2. Եկամուտների աճ	10.3	10.6
3. Գործազրկության կրճատում	19.2	21.3
4. Պայքար կաշառակերության դեմ	10.1	9.2
5. Շրջակա միջավայրի բարելավում	0.7	1.1
6. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդարացի լուծում	7.5	5.0
7. Փախստականների և ներքին տեղահանվածների վերադարձ իրենց բնակավայրեր	0.4	0.6
8. Արտագաղթի կրճատում	4.6	5.3
9. Արտագաղթածների վերադարձի և ներգաղթի խրախուսում	1.6	1.4
10. Հանցագործությունների նակարդակի նվազեցում	1.7	1.1
11. Քաղաքացիական իրավունքների երաշխավորում և օրենքի գերակայության ամրագրում	5.8	3.3
12. Սոցիալական անհավասարության կրճատում	6.7	7.3
13. Առողջապահական ծառայություններից օգվելու հնարավորությունների բարելավում	3.2	5.4
14. Քաղաքական կայունության պահպանում	4.6	-
15. Երկրի ռազմական հզորության ուժեղացում	3.4	1.8
16. Միջէթնիկական հարաբերությունների բարելավում	0.9	0.7
17. Այլ		
Ընդամենը	100.0	100.0

Տվյալ բաժնում գնահատվել է նաև մեր հասարակությունում գործող հիմնական սոցիալական ինստիտուտների նկատմամբ կանանց և տղամարդկանց վստահության և քաղաքական կուսակցություններում, հասարակական սեկտորում և կրոնական կազմակերպություններում կանանց և տղամարդկանց ընդգրկվածության աստիճանը:

Աղյուսակ 2.16. Կանանց և տղամարդկանց վստահությունը մեր հասարակության սոցիալական ինստիտուտների հանդեպ⁵ (% ամբողջի մեջ)

Սոցիալական ինստիտուտներ	Լիովին վստահում են		Հիմնականում վստահում են		Չեզոք		Հիմնականում չեն վստահում		Բոլորովին չեն վստահում	
	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.	Տ.	Կ.
1. Ազգային ժողով	1.6	1.5	7.9	10.1	16.5	17.1	27.4	26.4	41.4	38.4
2. Ոստիկանություն	3.1	3.6	15.4	20.4	17.4	16.5	24.0	22.4	36.2	31.9
3. Արդարադատության համակարգ	1.3	1.6	13.8	15.8	17.2	17.3	22.0	22.9	40.1	34.7
4. Քաղաքական կուսակցություններ	1.1	0.6	8.4	9.7	23.3	23.5	23.5	23.9	36.2	31.9
5. Եկեղեցի	34.4	43.8	32.9	34.3	15.6	10.4	7.4	4.0	7.7	4.9
6. Ջանգվածային լրատվության միջոցներ	4.8	7.6	28.3	33.7	27.8	23.9	19.5	18.8	15.4	11.6
7. Բանակ	43.6	43.8	29.6	33.6	12.0	9.8	6.9	5.1	5.9	5.3
8. Կրթական համակարգ	15.9	16.9	35.1	36.2	20.6	15.5	14.5	15.3	10.6	11.7
9. Կառավարություն, նախարարություններ	2.1	1.9	12.4	13.8	18.6	19.1	26.3	25.7	36.2	33.2
10. Առողջապահական համակարգ	7.9	8.8	31.2	38.8	19.9	14.8	17.8	17.2	20.1	17.6
11. Նախագահ	7.7	9.3	20.3	22.4	19.0	17.5	15.8	14.1	31.5	31.1
12. Մարդու իրավունքների պաշտպան /օմբուդսմեն/	3.1	3.2	9.7	11.6	17.7	19.6	15.9	9.8	26.7	25.6
13. Հայրենական քիզնես	11.8	11.4	30.1	28.3	24.0	24.7	12.2	11.3	12.4	11.6

⁵ Աղյուսակում ներառված չեն նրանք, ովքեր հրաժարվել են պատասխանել վերոնշյալ հարցին:

14. Տեղական հասարակական կազմակերպություններ	2.9	1.8	10.8	12.2	26.4	28.1	12.9	11.9	24.0	19.4
--	-----	-----	------	------	------	------	------	------	------	------

Ինչպես երևում է աղյուսակ 2.16.-ից, բնակչության վստահության մակարդակը մեր հասարակությունում գործող հիմնական սոցիալական ինստիտուտների հանդեպ բավականին ցածր է, մինչդեռ «հասարակական վստահությունը» հանդիսանում է տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը: Թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք առավելապես չեն վստահում Ազգային ժողովի գործունեությանը:

Տղամարդիկ թերահավատորեն են տրամադրված արդարադատության համակարգի գործունեության նկատմամբ (տղամարդկանց 40.1%-ը նշել է, որ բոլորովին չի վստահում մեր երկրի արդարադատության համակարգին): Կանայք ավելի շատ վստահում են առողջապահության համակարգին և ՋԼՄ-ներին:

Ընդհանուր առմամբ, առավել մեծ է բնակչության վստահության աստիճանը բանակի և եկեղեցու նկատմամբ. եկեղեցու հանդեպ կանանց վստահության մակարդակը 10.8 տոկոսային կետով ավելի բարձր է:

Տղամարդկանց 96.4%-ը և կանանց 99.1%-ը չեն հանդիսանում որևիցե հասարակական կազմակերպության անդամ, իսկ տղամարդկանց 95.5%-ը և կանանց 98.4%-ը չեն անդամակցում ոչ մի կուսակցության, տղամարդկանց 10.9%-ը և կանանց 7.6%-ը չեն հանդիսանում որևէ կրոնի հետևորդ (հարցվողների գերակշռող մասը՝ տղամարդկանց 85.1%-ը և կանանց 88.1%-ը հանդիսանում են Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչներ):

Ավարտելով այս բաժնի վերլուծությունը՝ կցանկանայինք ներկայացնել նաև կանանց և տղամարդկանց պատկերացումները Վրաստանի և Ադրբեջանի հետ տնտեսական և քաղաքական ոլորտներում Հայաստանի համագործակցության վերաբերյալ:

Այսպես, տղամարդկանց 27.1%-ը և կանանց 26.3%-ը լիովին կողմ են Հայաստանի՝ Ադրբեջանի հետ տնտեսական համագործակցությանը, իսկ տղամարդկանց 30.3%-ը և կանանց 34.6%-ը նման համագործակցությանը դեմ են: Նույնը կարելի է ասել քաղաքական ոլորտում Հայաստանի և Ադրբեջանի համագործակցության ընկալումների վերաբերյալ: Այսպես, տղամարդկանց 22.8%-ը և կանանց 19.2%-ը գտնում է, որ նման համագործակցությունն անհրաժեշտ է, այն

ժամանակ, երբ տղամարդկանց 31.4%-ը և կանանց 34.1%-ն արտահայտվում են լիովին դեմ:

Վրաստանի հետ տնտեսական համագործակցությանը դեմ են միայն տղամարդկանց 9.9%-ը և կանանց 11.6%-ը, իսկ քաղաքական համագործակցությանը՝ տղամարդկանց 10.4%-ը և կանանց 12.1%-ը: Ինչ վերաբերում է Հայաստանի համագործակցությանը ՆԱՏՕ-ի (Հյուսիս Ատլանտյան դաշինքի) հետ, ապա տղամարդիկ ավելի շատ են դեմ նման համագործակցությանը, քան կանայք:

Հետաքրքիր է նաև, որ կանանց համեմատաբար ավելի մեծ տոկոսն է դժվարացել պատասխանել ստորև բերված աղյուսակի հարցերին, ինչը կարելի է բացատրել նաև այն փաստով, որ կանայք ավելի քիչ են տեղեկացված քաղաքական իրադարձությունների մասին (տե՛ս աղյուսակ 2.17.):

Աղյուսակ 2.17. Կանանց և տղամարդկանց վերաբերմունքը ՆԱՏՕ-ի (Հյուսիս Ատլանտյան դաշինքի) համագործակցությանը (% ամբողջի մեջ)

	Տղամարդիկ	Կանայք
Լիովին սատարում են	21.7	18.8
Մասամբ են սատարում	16.5	17.6
Մասամբ դեմ են	10.8	9.9
Լիովին դեմ են	31.1	25.8
Դժվարանում են պատասխանել	19.9	27.9
Ընդամենը	100.0	100.0

2. 6. Արտաքին միգրացիա

Այս ենթաբաժնի վերլուծության հիմնական նպատակը միգրացիոն գործընթացների գենդերային ուսումնասիրությունն է, մասնավորապես, միգրացիոն գործընթացներում կանանց և տղամարդկանց ներգրավվածության, արտասահման մեկնելու հիմնական պատճառների և նպատակների, էմիգրացիայի ընթացքում աշխատանքի բնույթի, պայմանների, արտասահմանում սոցիալական երաշխիքներ ունենալու հնարավորությունների բացահայտումը և այլն:

Աղյուսակ 2.18. 2001-2004թթ. ընթացքում 3 և ավելի ամիս Հայաստանից բացակայած անձանց սեռա-տարիքային բաշխումը (% ամբողջի մեջ)

Տարիք	Տղամարդ	Կին	Ընդամենը
0-15	4.9	10.9	6.4
16-20	1.3	3.6	1.9

21-25	15.3	10.9	14.1
26-35	19.3	27.3	21.5
36-45	20.7	29.1	22.9
46-55	26.0	10.9	21.9
56-65	10.0	5.5	8.8
66 և բարձր	2.5	1.8	2.5
Ընդամենը	100.0	100.0	100.0

Ամբողջ համակցության մեջ տղամարդ-միգրանտները 3 անգամ գերակշռում են, այսինքն, տղամարդիկ շատ ավելի ինտենսիվ են ներգրավված արտաքին միգրացիայի գործընթացում (73.1% և 26.8%՝ համապատասխանաբար): Սակայն, նկատելի են որոշ տարիքային տարբերություններ: Այսպես, մինչև 35 տարեկան միգրանտ տղամարդիկ կազմում են 40.8%, իսկ կանայք՝ 52.7%, սակայն, արդեն 36-ից բարձր տարիքային խմբում տղամարդ-միգրատները կազմում են 59.4%, իսկ կանայք՝ 47.3 %:

Համաձայն ստացված արդյունքների, տղամարդկանց 84.0%- ի և կանանց 63.6%-ի համար միգրացիայի հիմնական դրդապատճառն արտասահմանում աշխատանք գտնելն է:

Միևնույն ժամանակ, ստացված տվյալները վկայում են, որ տղամարդիկ միջինում ունենում են ավելի շատ աշխատանքային եկամուտ, քան կանայք: Կանանց 40.0%-ը և տղամարդկանց ընդամենը 13.3%-ը միգրացիայի ընթացքում որևիցե եկամուտ չեն ունեցել (տե՛ս աղյուսակ 2.19):

Աղյուսակ 2.19. Էմիգրացիայի ընթացքում ունեցած աշխատանքային եկամուտի գեներային նկարագիրը (% ամբողջի մեջ)

Եկամուտի տեսակը	Տղամարդ	Կին
1. Ունեցել է / ունի աշխատանքային եկամուտ	76.7	52.7
2. Ունեցել է / ունի թե՛ աշխատանքային, և թե՛ ոչ աշխատանքային եկամուտ /թոշակ, նպաստ, օգնություն/	1.3	-
3. Ունեցել է / ունի ոչ աշխատանքային եկամուտ /թոշակ, նպաստ, օգնություն/	3.3	1.8
4. Որևիցե եկամուտ չի ունեցել	13.3	40.0
5. Դժվարացել է պատասխանել	5.4	5.5

<i>Ընդամենը</i>	<i>100.0</i>	<i>100.0</i>
-----------------	--------------	--------------

Երկրից մեկնելու պատճառների մեկնաբանման մեջ գենդերային որևէ տարբերություններ չկան. և՛ կանանց, և՛ տղամարդկանց համար դա ընդհանրապես աշխատանքի բացակայությունն է, իսկ ավելի հաճախ՝ բավարար վաստակ ապահովող աշխատանքի բացակայությունը: Սակայն արդեն միգրացիայի ընթացքում սկսում են նկատելի դառնալ որոշակի գենդերային տարբերություններ: Այսպես, ընդհանուր առմամբ կին-միգրանտներն ավելի անպաշտպան են, քանի որ նրանց հետ ավելի հազվադեպ են կնքում գրավոր աշխատանքային պայմանագրեր (15.2% և 9.4%՝ համապատասխանաբար): Հարկ է նշել, որ ընդհանրապես միգրանտների ավելի քան 50%-ի հետ, ըստ ստացված արդյունքների, որևէ համաձայնագիր չի կնքվում:

Բավականին դժվար է մեկնաբանել պոտենցիալ միգրացիան, քանի որ տղամարդկանց 68.0%-ը և կանանց 74.5%-ը հրաժարվել են պատասխանել այն հարցին, թե արդյոք հնարավորության դեպքում կմեկնեն երկրից: Առավել հակված են արտագաղթելու մինչև 25 տարեկան տղամարդիկ և 26-35 տարեկան կանայք:

2. Բնակչության պատկերացումները գենդերային փոխհարաբերությունների վերաբերյալ ժամանակակից հայ հասարակությունում

Ֆոկուս-խմբերի միջոցով ստացված արդյունքները ներկայացված են ըստ հետևյալ բաժինների՝

- Հայ հասարակությունում գենդերային հավասարության մասին պատկերացումներ:
- Կանանց կարգավիճակի բարձրացմանը խոչընդոտող գործոնների վերլուծություն:
- Գենդերային հավասարության ապահովման հեռանկարներ:

1. Հայ հասարակությունում գենդերային հավասարության մասին պատկերացումներ

Համաձայն ֆոկուս խմբերի միջոցով ստացված արդյունքների, գենդերային հավասարության վերաբերյալ պատկերացումները բավականին հակասական են և իրարամերժ: Ընդհանուր առմամբ, նկատելի են երկու տարբեր միտումներ. մասնակիցների մի մասը, որտեղ գերակշռում են «կրթված» երիտասարդները, գտնում է, որ ներկայումս մեր հասարակությունում գենդերային հավասարությունն ապահովված չէ: Մինչդեռ, մասնակիցների մեկ այլ խումբ (հիմնականում մեծահասակ, հատկապես գյուղաբնակ) գենդերային խտրականության որևէ դրսևորում գրեթե չի տեսնում:

Հիմնական խնդիրն, ըստ բոլոր մասնակիցների՝ կայանում է կանանց և տղամարդկանց դերերի և կարգավիճակների մասին ավանդական պատկերացումների գերակայության մեջ:

-Իրավաբանորեն ես չեմ տեսնում որևէ խտրականություն, ես ծանոթ եմ օրենքներին և գիտեմ, որ մեր օրենսդրությունը բավականին «զգայուն է» գենդերային տեսանկյունից, պարզապես, ցավոք, մարդիկ չեն ապրում օրենքներով (կին, 35 տ., ք. Երևան):

-Կանայք և տղամարդիկ հավասար են իրավաբանորեն, բայց մենք ամեն օր հանդիպում ենք խտրականության քաղաքական, տնտեսական ոլորտում և ընտանիքներում (Կին, 46 տ., ք. Իջևան):

-Այսօր Հայաստանում կանայք և տղամարդիկ չունեն հավասար հնարավորություններ, բայց ունեն հավասար իրավունքներ, այստեղ է խնդրի արմատը: Սակայն չամրագրված օրենքներն ավելի ուժեղ են. այս ոլորտը մեր հասարակությունում չի կարգավորվում ամրագրված օրենքներով (Կին, 21 տ., ք. Երևան):

Երիտասարդները, հավանաբար լինելով առավել բաց նոր գաղափարների յուրացման համար, ունեն բավականին ծայրահեղ պատկերացումներ կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ: Այսպես, երիտասարդ կանանց կարծիքով՝ *«...մեր հասարակությունում բոլոր որոշումները կայացնում են տղամարդիկ, իսկ կանանց դերն ամեն կերպ սահմանափակվում է. մեր հասարակությունում գենդերային հավասարություն չկա» (տղամարդ, 22 տ., ք. Երևան), « մեր հասարակությունում կանանց նկատմամբ խտրականությունն արտահայտվում է ցանկացած տիպի հարաբերություններում, սկսած աշխատաշուկայից և վերջացրած նրանով, որ աղջիկը պետք է քիչ խոսա, լինի համեստ, զուսպ և այլ» (Կին, 21 տ., ք. Երևան), կամ «...խտրականությունն սկսվում է ընտանիքից. աղջկան փոքրուց վերաբերվում են այնպես, որ նա ամուսնանալու է գնա, ուրեմն նրան պետք չի ոչ շատ սովորել, ոչ շատ հաջողությունների հասնել աշխատանքում» (Կին, 24 տ., ք. Իջևան):* Խտրականություն, ըստ երիտասարդների, գոյություն ունի նաև որոշումների կայացման ոլորտում՝ սկսած առօրյա որոշումներից, վերջացրած՝ քաղաքականով:

-Հայ կինը կարծես զրկված է որոշում կայացնելու իրավունքից. իր փոխարեն բոլոր որոշումները կայացնում են ծնողները, ամուսինը, ի վերջո հասարակությունը, (Կին, 20 տ., ք. Երևան):

Իհարկե, զգալի տարբերություններ կան Երևանի և մարզերի երիտասարդների պատկերացումներում, քանի որ վերջիններս (մասնավորապես երիտասարդ տղամարդիկ) մեր հասարակությունում գրեթե չեն տեսնում գենդերային խտրականության դրսևորումներ և վստահ են, որ *«եթե կինը չի աշխատում, այդպես էլ պետք է լինի»:*

Այն փաստը, որ մեր հասարակությունում կանանց կարգավիճակն առավել ցածր է քաղաքական ոլորտում, ապացուցման կարիք չունի: Նույնը կարելի է ասել աշխատաշուկայում կանանց ներգրավվածության և կատարած աշխատանքների մասին: Ինչ վերաբերում է կանանց կրթական կարգավիճակին, ապա ըստ վիճակագրական տվյալների և բազմաթիվ հետազոտությունների՝ Հայաստանում սովորող կանանց բաժինը նույնիսկ գերակշռում է սովորող տղամարդկանց բաժնին:⁶

Սակայն պատկերը մի փոքր փոխվում է հետբարձրագույն կրթության մակարդակում: Ֆոկուս-խմբերի մասնակիցներից մի քանիսի հավաստմամբ «..... բոլորը ասում են, որ չկա խտրականություն կրթական ոլորտում: Ես ասպիրանտուրա ընդունվելիս կոնկրետ առնչվել նման դեպքի հետ, երբ դիմեցի ասպիրանտուրայի բաժին և ինձ ասեցին.«...բայց դու տղա՞ ես, որ ասպիրանտուրա ես ուզում դիմել, կարող ես ուղակի հայցվոր ձևակերպվել» (կին, 24 տ., ք. Երևան):

Սակայն, ցավոք, նույնիսկ հետբարձրագույն կրթությունն այսօր չի հանդիսանում սոցիալական կարգավիճակը պայմանավորող կարևորագույն բաղադրիչ: Այսպես, շատ աղքատ կանանց շրջանում ընդհանրապես կրթություն չունեցող կանայք 1.5 անգամ ավելի քիչ են, և 14.5 տոկոսային կետով ավել են հետբարձրագույն կրթություն ունեցող կանայք, քան տղամարդիկ⁷:

2. Կանանց կարգավիճակի բարձրացմանը խոչընդոտող գործոնների վերլուծություն

Ֆոկուս-խմբերի հարցման միջոցով հնարավոր դարձավ առանձնացնել մի շարք գործոններ, որոնք այսօր սահմանափակում են կանանց սոցիալական կարգավիճակի բարձրացումը:

- ***Գենդերային կարծրատիպեր, սովորույթներ և ավանդույթներ***

Հիմնական գործոնը, որն այսօր սահմանափակում է մեր հասարակությունում գենդերային հավասարությունը, կանանց և տղամարդկանց վարքային ստանդարտների վերաբերյալ խորն արմատացած կարծրատիպերն են: Ընդ որում,

⁶ Women and men in Armenia. A statistical booklet, National Statistical Service of RoA, Yerevan, 2005.

⁷ *Ի անգլիստիկոն, հայերենի մասին հարցազրույցները* ԱճԻ ԲԻԵ, UNDP, 2002.

հարցվողների մեծամասնությունն ընդունում է, որ այդ կարծրատիպերը շատ դեպքերում անընդունելի են, կանխակալ և արդարացված չեն, բայց օրեցօր շարունակում է վերարտադրել դրանք:

-Այդ պատկերացումները այնքան խորն են նստած մեր գիտակցության մեջ, որ շատ լուրջ և երկարատև աշխատանք է պահանջվում մարդկանց հոգեբանությունը, մտածելակերպը փոխելու համար, մենք դեռ չենք կարող համակերպվել այն մտքի հետ, որ կինը և տղամարդը հավասար են (կին, 57տ., գ. Սև Քար):

-Կարծրատիպերը մեր կյանքի ոճն են, մենք չենք կարող դրանցից ազատվել, (տղամարդ, 39 տ., ք. Իջևան):

Բնականաբար կարծրատիպերի ազդեցությունն անհամեմատ մեծ է գյուղական վայրերում, որտեղ դեռևս կարելի է հանդիպել հետևյալ պատկերացումների՝ *«.....եթե տղամարդը ներկա է, կինը իրավունք չունի խոսա, կարծիք արտահայտի, դա անընդունելի է»:*

Չետաբրքիր է նաև, որ հատկապես գյուղաբնակ վայրերում կանայք (ավելի հաճախ, քան տղամարդիկ) առավել հակված են պահպանել և իրենց դուստրերին փոխացնել կանանց վարքագծի վերաբերյալ ավանդական պատկերացումները:

- ***Սոցիալ-տնտեսական իրավիճակ***

Չաջորդ կարևոր գործոնը, որն առանձնացվել է ֆոկլուս-խմբերի մասնակիցների կողմից, ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակն է/օր., աշխատատեղերի բացակայությունը/, ինչը բերում է այն բանին, որ կանայք ստիպված են մնալ տանը, խնամել երեխաներին և զբաղվել տնային տնտեսությամբ, քանի որ ընտանիքը չունի այլ ֆինանսական աղբյուր կնոջ կողմից կատարված աշխատանքը փոխարինելու համար: *«Եթե ընտանիքը աղքատ է, նա չի կարող վճարել դայակի կամ խոհարարի համար, ստիպված կինը պետք է կատարի այդ աշխատանքը»*, (տղամարդ, 31 տ., գ. Թոուզ):

Ընդհանուր առմամբ, գենդերային հավասարությանն ուղղված գաղափարախոսությունը ֆոկլուս-խմբերի մասնակիցների մեծ մասի կողմից չի համարվում շատ արդիական և հրատապ խնդիր՝ բնութագրելով այն որպես «էլիտար գաղափարախոսություն», որն այդքան էլ չի համապատասխանում մեր հասարակության առօրյա պահանջներին և խնդիրներին:

- ***Գենդերային սոցիալականացման առանձնահատկությունները***

Գենդերային սոցիալականցումը, անկասկած, մարդկանց վարքագծի վրա ազդող ամենաուժեղ գործոններից է: Հենց գենդերային սոցիալականացման առանձնահատկություններն են, որ Հայաստանում պայմանավորում են կանանց վարքային արժեքները, նորմերը, նպաստում են որոշակի սանկցիաների ձևավորմանը, որոնք ուղղված են կանանց բնորոշ վարքագծից շեղումների կարգավորմանը և այլն:

Ինչպես հայտնի է, Հայաստանում դաստիարակության ընթացքում այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ինքնավստահությունը, նպատակասլացությունը, ազատամտությունը վերագրվում են տղա երեխաներին, և հակառակը՝ հեզությունը, համեստությունը, պասիվությունը՝ աղջիկներին: Փաստորեն, բարձր կարգավիճակի հասնելուն նպաստող սոցիալ-հոգեբանական հատկանիշներն աղջիկների դաստիարակության ընթացքում չեն խրախուսվում, երբեմն էլ նույնիսկ արգելվում են:

Մեր հասարակությունում տարբեր քաղաքական սոցիալաիզացիան ևս կանանց և տղամարդկանց կողմնորոշում է տարբեր դերերի, քաղաքականության և ակտիվ գործելակերպի նկատմամբ տարբեր վերաբերմունքի:

-Քաղաքականությունը, առաջնորդությունը չեն հանդուրժում թույլերին, այդ ոլորտները «սիրում» են համարձակություն և համառություն, իսկ այդ որակները, ցավոք, չեն դաստիարակվում կանանց մոտ (տղամարդ, 41 տ., ք. Երևան):

- ***Կանանց ֆինանսական և սոցիալական կապիտալների բացակայությունը:***

Վերջին տարիներին տեղի ունեցող սոցիալ-տնտեսական տրանսֆորմացիաները, շուկայական տնտեսության անցումը բերեցին հասարակության սոցիալական խիստ բևեռացման, մեկ խավի հարստացմամբ՝ ի հաշիվ մյուս շերտերի: Այս իրավիճակում կանայք ավելի թույլ գտնվեցին. նրանք առավել քիչ մրցունակ են և կազմում են կախյալ խումբ, ինչը, բնականաբար, սահմանափակում է կանանց մոբիլությունը:

- Մեր հասարակությունում բարձր պաշտոններ կարող են զբաղեցնել միայն նրանք, ովքեր ունեն համապատասխան ռեսուրսներ, մասնավորապես, ֆինանսական: Առանց նախնական ֆինանսական կապիտալի ոչինչ չես կարող անել: Իսկ ու՞մ ձեռքում է այդ կապիտալը: Իհարկե, հիմնականում տղամարդկանց: Կանայք այդ պայքարում կա՛ն չեն մասնակցում ընդհանրապես, կա՛ն էլ շուտ դուրս են գալիս «խաղից» (կին, 33տ., ք. Իջևան):

Խոչընդոտող գործոն է նաև այն, որ կանայք չունեն սոցիալական կապիտալ և այն ձեռք բերելու հմտություններ:

-Այսօր կանայք չունեն կապեր և ծանոթություններ, որպեսզի կարողանան առաջ գնալ (տղամարդ, 25 տ., ք.Երևան):

- ***Սոցիալական շերտավորման և շարժունության կայուն համակարգի բացակայություն***

Տրանսֆորմացիոն հասարակությունները, ինչպիսին է և Հայաստանը, բնութագրվում են չձևավորված կամ քայքայված սոցիալական շերտավորման համակարգով: Թե՛ կանանց, և թե՛ տղամարդկանց սոցիալական շարժունությանը

խոչընդոտում են հիերարխիայի բացակայությունը և դրանից բխող՝ ստատուսի գերազնահատումը: Մեր կարծիքով, վերոնշյալ խնդրի լուծումը պետք է սկսել կանանց՝ ֆունկցիոնալ աստիճանով բարձրանալու հնարավորություններ տալով և սոցիալական մոբիլության մեջ դեմոկրատական արժեքների ներմուծմամբ:

- ***Իրավական ոչ կոնպետենտություն***

Հաճախ խտրականության պատճառ է դառնում իրենց իսկ իրավունքների վերաբերյալ բնակչության ոչ բավարար տեղեկացվածությունը: Մասնավորապես, շրջաններում առանձնացվում էր, որ *«կանայք են մեղավոր, որ տեղյակ չեն իրենց իրավունքներից, չգիտեն ինչի դեմ կարող են պայքարել»:*

Արժեքների հակադրում՝ ընտանիքի կայունություն և գենդերային հավասարություն:

Բոլորին հայտնի է հայոց արժեքային համակարգում ընտանիքի, ընտանեկան հարաբերությունների գերակա դերը, ինչն էլ ապացուցվել է բազմաթիվ սոցիոլոգիական, էթնոգրաֆիական, հոգեբանական հետազոտությունների միջոցով: Առաջնային նպատակ է համարվում ընտանիքի ամբողջականության պահպանումը: Հատկանշական է այն, որ գենդերային հավասարությունը դիտվում է որպես վտանգ ընտանիքի կայունության համար:

Հիմնական մտավախությունը, որ կիսում են ֆոկլուս-խմբերի ներկայացուցիչները հետևյալն է՝ *«գենդերային հավասարության հարցը արևմտյան մտածելակերպի արդյունք է, մեզ դա հարիր չէ: Եթե մենք էլ սկսենք այդպես մտածել, ապա դա կբերի լուրջ վտանգների. հենց որ կինը մտավ իշխանության մեջ, հայ ընտանիքը կքայքայվի, իսկ դա հայերի ամենամեծ արժեքն է, մենք չենք կարող մեզ թույլ տալ այդպես մտածել»:*

-Ես համոզված եմ, որ մենք ավելի կակտիվանայինք և կքաջալերվեինք, եթե տեսնեինք, որ մեզանում կան կանայք, ովքեր առաջ են գնում, չեն վախենում, պայքարում են, հասնում են ինչ-որ բանի (կին, 44 տ., ք. Իջևան):

- ***Կանանց համախմբվածության պակասը***

Ֆոկուս-խմբերի մասնակիցների կողմից բազմիցս նշվել է այն փաստը, որ կանայք չեն սատարում միմյանց, համախմբված չեն և չունեն իրենց իսկ իրավունքները պաշտպանելու համար միասնական կամք. - *Բայց այստեղ լուրջ խնդիր կա: Կանայք իրենք չեն ուզում մասնակցել ընտրություններին, և որ ավելի կարևոր է, հենց կանայք չեն ընտրում կանանց, ավելին, նույնիսկ շատ հաճախ խանգարում են (կին, 38 տ., գ.Թոուզ):*

-Ավագանու անդամ հենց կանայք չեն ընտրում կանանց, գնում են ու էլի ընտրում են տղամարդու: Սա լուրջ խնդիր է, (տղամարդ, 37 տ., ք. Իջևան):

Որոշ առումով հերքվեց այն տարածված կարծիքը, որ կանայք իրենք են պասիվ և չեն ցանկանում ակտիվ մասնակցել քաղաքական և հասարակական կյանքին, խուսափում են պատասխանատվությունից և գերադասում են դուրս չգալ «ընտանիքի» սահմաններից:

-Իհարկե մենք պատրաստ ենք պայքարել մեր կարգավիճակի համար, պատրաստ ենք գրավել բարձր դիրքեր, հենց հասարակական կազմակերպությունների սեկտորն այսօր ապացուցում է, որ կանայք կարող են շատ ակտիվ լինել, դրսևորել իրենց (կին, 51 տ., ք. Երևան):

-Մեր մարզի կանայք շատ ակտիվ են, մենք պատրաստ ենք լոբբինգի միջոցով ազդել քաղաքականություն մշակողների և տնտեսական լծակներ ունեցողների վրա, որպեսզի բարելավենք կանանց վիճակը (կին, 46 տ., ք. Իջևան):

-Մենք խուսափում ենք ինքներս մեր մեջ լիդեր տեսնելուց, մեր կարող ուժ լինելը ցույց տալուց: Առաջինը ինքներս մեզ պետք է ապացուցենք, որ մենք կարող ուժ ենք, և հասարակությունը մեր մեջ կարող ուժ կտեսնի (կին, 48 տ., ք. Իջևան):

3. Գեներային հավասարության ապահովման հեռանկարներ

Գեներային հավասարության ապահովմանն ուղղված միջոցառումներից առանձնացվել են՝

- Կանանց համար հատուկ վարկային ծրագրերի տրամադրում, որոնք հնարավորություն կտան նրանց ձեռք բերել տնտեսական անկախություն:
- Հնարավորինս շատ կանանց ներգրավվել համայնքային առաջնության գործընթացի մեջ:

-Առաջիկայում տեղական կառավարման մարմինների ընտրություններն են, եկեք կանանց սատարենք, թող գնան: Բավականին կանանց կազմակերպություններ կան, որոնք շատ ծանաչված են, ընդունված մարզում: Օրինակ, մեր այս խումբը կարող էր նրանց թև ու թիկունք կանգնել, և կունենայինք մեր ներկայացուցիչն այնտեղ: Այդպես շատ ավելի հեշտ կլիներ հարցեր լուծել (կին, 44 տ., ք. Իջևան):

- Գեներային կրթության տարածում /սկսած մանկապարտեզներից/, ինչպես նաև գրագետ քարոզչության կազմակերպում: Ինչպես արդեն բազմիցս նշվել է, գեներային հավասարության ապահովումը բնակչության զգալի զանգվածի համար զուգակցվում է «խորթ», «ոչ հայկական» մտածելակերպի հետ: Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է դառնում այնպիսի գեներային քաղաքականության մշակումը, որը հիմնված կլինի ազգային արժեքների վրա:

-Դա նոր մտածելակերպ է մեզ համար, նոր գաղափարներ, բայց մենք պետք է գնանք համաշխարհային միտումների ուղղությամբ: Այլ ճանապարհ չկա (տղամարդ, 32 տ., ք. Երևան):

- Գեներային հավասարության ապահովման բնագավառում ՀԿ-ների և պետության սերտ համագործակցությունը

-Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ հասարակական սեկտորն առանձին է գործում, իսկ պետությունը՝ առանձին: Նրանք պետք է համագործակցեն, լինեն միևնույն գաղափարախոսության կրողը (կին, 25 տ., ք. Երևան):

:

- **«Դրական» կերպարների ստեղծում:**

-Կարծում եմ, շատ կարևոր է ստեղծել ակտիվ, խելացի և միևնույն ժամանակ ընտանեկան արժեքներով առաջնորդվող կանանց կերպարներ: Դա դրական ազդեցություն կունենա. մի կողմից այդ կինը կլինի արևմտյան արժեքների կրող, իսկ մյուս կողմից՝ ազգային: Կարելի է նաև գովազդել մեր պատմության ընթացքում ունեցած ակտիվ կանանց, ցույց տալ, թե ինչպիսի բարձրունքների է հասել կինը մեր պատմության ողջ ընթացքում (տղամարդ, 35 տ., ք. Երևան):

- **Տղամարդկանց ներգրավվումը գեղերային հավասարության սկզբունքների և գաղափարների տարածման գործընթացում:**

-Ես համաձայն եմ, որ տղամարդիկ պետք է աջակցեն մեզ, բայց կարծում եմ, որ հենց մենք՝ կանայք, պետք է լուծենք մեր հարցերը (կին, 42 տ., ք. Երևան):

Ամփոփելով ֆոկուս-խմբերի միջոցով ստացված արդյունքները՝ նշեմք, որ մասնակիցների մեծամասնությունը հիմնականում զգում է դրական փոփոխություններ և հանոզված է, որ, ընդհանուր առմամբ, գեղերային հավասարության ապահովումն անհրաժեշտ է մեր հասարակության համար: Իհարկե, ինչպես վկայում են հետազոտության արդյունքները և պարզապես առօրյա դիտարկումները, քննարկվող թեման ոչ միանշանակ է ընդունվում տարբեր խավերի և խմբերի կողմից և առաջացնում է ազգային արժեքները կորցնելու մտավախություն: Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է դառնում այնպիսի գեղերային քաղաքականության մշակումը, որը հիմնված կլինի արդի հայ հասարակությունում գերակայող արժեքային համակարգի վրա և ընդունելի կլինի հասարակության լայն խավերի կողմից:

-Ճիշտ է փոփոխությունները դանդաղ են ընթանում, բայց ես հավատում եմ, որ մի քանի տարի հետո դրական փոփոխություններն ավելի շոշափելի կլինեն: Պարզապես պետության դերն այս հարցում պետք է շատ ավելի մեծ լինի, հասարակական կազմակերպությունները չեն կարող միայնակ հասնել մեծ որակական փոփոխությունների: Պետք է բոլորս մտածենք այդ հարցերի մասին, այլ ոչ թե ասենք, որ սա դեմ է մեր արժեքներին և ոչինչ չանենք (կին, 24տ, ք.Երևան):

Ամփոփում

Ամփոփելով ժամանակակից հայ հասարակության գենդերային շերտավորմանը և գենդերային դիրքորոշումներին վերաբերող աշխատանքը՝ ներկայացնենք առավել հետաքրքրական արդյունքները:

1. Չնայած նրան, որ տղաները և աղջիկները գրեթե հավասարաչափ են ընդգրկված բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ նկատվում են տարբերություններ այն հարցում, թե ինչպես են երկու սեռերի ներկայացուցիչները հոգում ուսման հետ կապված ծախսերը: Այսպես, հետազոտության արդյունքները վկայում են, որ սովորող աղջիկների մեծ մասի ուսման ծախսերը հոգում են ընտանիքի այլ անդամները, իսկ տղաները որոշ չափով կարողանում են հոգալ վերոնշյալ ծախսերն ինքնուրույն (համապատասխանաբար՝ 3.2% և 13.7%):
2. Հետաքրքիր գենդերային տարբերություններ են արձանագրվել ուսանելու նպատակների ընկալման մեջ: Այսպես, մինչև 20 տարեկան հետմիջնակարգ կրթություն ստացողների շրջանում դիպլոմի առկայությունը՝ որպես նպատակ, նշվել է 25.0% տղաների և ընդամենը 6.1% աղջիկների կողմից, սակայն արդեն 21-25 տարիքային խմբում աղջիկների գրեթե 16.0%-ը նշել է, որ կրթական համակարգում ընդգրկված լինելու հիմնական պատճառը դիպլոմ ստանալն է:
3. Նկատելի է բավականին հետաքրքիր միտում. կախված տարիքից՝ կրճատվում է այն տղամարդկանց քանակը, ովքեր ուսանում են՝ Հայաստանում հաջող կարիերա ունենալու նպատակով: Այսպես, եթե մինչև 20 տարեկան տարիքային խմբում այդ պատճառը նշվել է 37.5% կրթություն ստացող տղամարդկանց կողմից, 21-25 տարիքային խմբում՝ 28.6%, ապա արդեն 26-35 տարիքային խմբում ընդամենը 25.0% տղամարդկանց կողմից: Լիովին հակառակ պատկեր է նկատվում կանանց պարագայում. մինչև 20 տարեկան աղջիկների միայն 18.2%-ն է նշել, որ ուսանում է Հայաստանում հաջող կարիերա ունենալու համար, 21-25 տարեկանների խմբում այդ թիվը կազմում է ընդամենը 10.5%, իսկ արդեն 26-35 տարեկանների խմբում՝ 44.5%:
4. Որոշ առումով տարիքն ազդում է նաև մասնագիտության նկատմամբ դիրքորոշումների ձևավորման վրա, ընդ որում, այստեղ ևս նկատելի են զգալի գենդերային տարբերություններ: Այսպես, եթե մինչև 20 տարեկան կրթություն ստացող տղաների 29.2%-ը նշել է, որ սիրում է իր մասնագիտությունը, ապա նույն տարիքային խմբում նման պատասխան է տվել կանանց մոտ 60%-ը:

Պատկերը կտրուկ փոխվում է 26-35 տարեկանների շրջանում. այս տարիքի տղամարդկանց 50%-ը համարում է, որ ուսանելու հիմնական նպատակը սերն է տվյալ մասնագիտության նկատմամբ: Նույն կարծիքին է կանանց ընդամենը 11.1%-ը: Կանայք ավելի շատ հակված են արտասահմանում լավ աշխատանք գտնելու մտքին: Սրա մասին են վկայում հետազոտություն արդյունքները, ըստ որոնց՝ երիտասարդ կանանց մոտ 30%-ի համար ուսանելու հիմնական նպատակ է հանդիսանում արտասահմանում աշխատանք գտնելը: Տղամարդկանց շրջանում վերոնշյալ նպատակն է հետապնդում միայն 8.9%-ը:

5. Որոշ գենդերային տարբերություններ են արձանագրվել նաև այն հարցի ընկալման շուրջ, թե արդյոք ուսումն ավարտելուց հետո հարցվողներն աշխատանք կգտնեն Հայաստանում, թե ոչ: Այսպես, կանայք ընդհանուր առմամբ ավելի լավատեսորեն են տրամադրված. նրանց 74.0%-ը կարծում է, որ կգտնի աշխատանք իր մասնագիտությամբ, մինչդեռ նույն կարծիքին է տղամարդկանց ընդամենը 60.7%-ը:
6. Տղամարդկանց տնտեսական ակտիվությունը՝ համեմատած կանանց տնտեսական ակտիվության հետ, բավականին բարձր է, և գրեթե բոլոր ոլորտներում տղամարդկանց ներգրավվածությունը զգալիորեն գերակշռում է: Այսպես, տղամարդկանց 41.8%-ը պետական և մասնավոր ոլորտների վարձու աշխատող է, մինչդեռ նույն ոլորտներում կանանց թիվը 15%-ով ավելի ցածր է: Ինքնազբաղ են տղամարդկանց 9.6%-ը և կանանց ընդամենը 2.6%-ը:
7. Կանայք համեմատաբար ավելի մեծ բաժին են կազմում գործազուրկների ընդհանուր թվի մեջ, ինչպես նաև, ըստ ստացված արդյունքների, կանայք 1.3 անգամ ավելի շատ են թոշակառուների և հաշմանդամների թվի մեջ: Առավել ուշագրավ է այն, որ աշխատանք չի փնտրում տղամարդկանց ընդամենը 2.5%-ը և կանանց 18.4%-ը: Այս փաստը հավանաբար կարելի է մեկնաբանել ինչպես կանանց պասիվությամբ, այնպես էլ հասարակությունում դեռևս պահպանվող կարծրատիպերի առկայությամբ, համաձայն որոնց՝ «կինը չպետք է աշխատի»: Վերոնշյալի մասին են վկայում նաև ֆոկլուս-խմբերի միջոցով անցկացված հարցազրույցների արդյունքները. ընդհանուր առմամբ, կանանց շրջանում նկատվում է ակտիվություն, և կանանց զգալի մասը ցանկություն ունի մասնակցել երկրի քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքին (տե՛ս գլուխ 3):
8. Չափազանց մեծ տարբերություն է նկատվում այն հարցի շուրջ, թե ինչպես են ընտանեկան պատճառները սահմանափակում երկու սեռերի ներկայացուցիչների աշխատանքային ակտիվությունը: Այսպես, ընտանեկան

պատճառներից ելնելով՝ չեն աշխատում չգբաղված կանանց 32.8%-ը և չգբաղված տղամարդկանց ընդամենը 1.9%-ը:

9. Մոտ 2 անգամ ավել թերի միջնակարգ և միջնակարգ կրթություն ունեցող տղամարդիկ չեն կարող ընդհանրապես աշխատանք գտնել (աշխատանք չեն կարողանում գտնել թերի միջնակարգ կրթություն ունեցող կանանց 47.1%-ը և միջնակարգ կրթություն ունեցող կանանց 37.6%-ը), և ևս 33.4% թերի միջնակարգ և 28.1% միջնակարգ կրթություն ունեցող տղամարդիկ չեն կարողանում պատշաճ վարձատրությամբ աշխատանք գտնել: Այս փաստը, մեր կարծիքով, կարելի է բացատրել հետևյալով՝
- Թերի միջնակարգ և միջին մասնագիտացում ունեցող տղամարդկանց պահանջարկն աշխատաշուկայում համեմատաբար ավելի ցածր է: Հնարավոր է, որ թերի միջնակարգ /միջին մասնագիտացում ունեցող կանանց ավելի հեշտ է աշխատանք գտնել սպասարկման ոլորտում:
 - Թերի միջնակարգ և միջին մասնագիտացում ունեցող կանայք ունեն հավակնությունների համեմատաբար ավելի ցածր մակարդակ:

Այս երևույթը առավել ցայտուն է արտահայտվում բարձրագույն կրթության մակարդակում: Միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների պարագայում նկատելի է հետևյալ պատկերը. եթե տղամարդիկ, ովքեր համոզված են, որ չեն կարող աշխատանք գտնել, գերազանցում են կանանց 8.5 տոկոսային կետով, ապա նույն կրթությունն ունեցող այն տղամարդկանց քանակը, ովքեր չեն կարողանում գտնել աշխատանք պատշաճ վարձատրությամբ, գերազանցում է կանանց 2.5 անգամ (45.0% և 18.7%՝ համապատասխանաբար):

Հետաքրքիր է այն, որ երկու խմբերում էլ, անկախ սեռից՝ չեն կարող աշխատանք գտնել թերի միջնակարգ մասնագիտություն ունեցողները, իսկ պատշաճ վարձատրությամբ աշխատանք գտնելը դժվար է միջին-մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների համար:

10. Ընդհանուր առմամբ, կանայք համեմատաբար ավելի հոռետեսորեն են տրամադրված և հակված են դրսևորել պասիվ վարք այն պարագայում, եթե սոցիալ-տնտեսական վիճակը երկրում առաջիկա երեք տարիների ընթացքում չբարելավվի: Այսպես, կանանց թիվը, ովքեր կարծում են, որ հազիվ թե կարողանան որևէ բան փոխել իրենց կյանքում, մոտ 2 անգամ գերազանցում է նույն կարծիքն ունեցող տղամարդկանց թվին: Ավելին, այն կանանց բաժինը, ովքեր միանշանակ համոզված են, որ չեն փորձի առավել եկամտաբեր աշխատանք գտնել, 1.5 անգամ ավել է, քան նույն կարծիքն ունեցող տղամարդկանց բաժինը: Այս երևույթը, մեր կարծիքով, դժվար է մեկնաբանել,

քանի որ այն որոշ չափով հակասում է անցումային շրջանում արձանագրված հակառակ բնույթի բազմաթիվ փաստերի, երբ կանայք դրևորում էին առանձնահատուկ ճկունություն, կենսունակություն և նախաձեռնություն:

11. Բավականին հետաքրքիր տարբերություններ են արձանագրվել կանանց և տղամարդկանց համար ընդունելի և անընդունելի վարքի վերաբերյալ հարցվողների դիքորոշումների մեջ: Այսպես, հարցվողների 34.6%-ի կարծիքով՝ կանանց համար ընդհանրապես ընդունելի չէ թունդ ալկոհոլային խմիչքների օգտագործումը, այն ժամանակ, երբ տղամարդկանց համար նման վարքն ընդունելի չի համարում հարցվողների միայն 12.8%-ը: Ընդ որում, կանանց կողմից թունդ խմիչքների օգտագործումն ավելի ընդունելի է համարվում հենց կանանց կողմից: Այսպես, կանայք գրեթե հավասարաչափ անընդունելի են համարում թունդ խմիչքների օգտագործումը թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց կողմից, մինչդեռ տղամարդկանց 68.9%-ը կանանց նման վարքն անընդունելի է համարում, իսկ տղամարդկանց համար՝ 31.1%-ը: Հարցվողների 67.2%-ը գտնում է, որ կանայք մինչև ամուսնանալը չպետք է ծնողներից առանձին ապրեն, մինչդեռ 58.4%-ը հանդուգն է, որ նման վարքն անընդունելի է նաև տղամարդկանց համար: Գենդերային զգալի տարբերություններ են նկատվում նաև առանց ամուսնանալու սեռական հարաբերություններ ունենալու փաստի վերաբերյալ հասարակության ընկալման մեջ: Այսպես, հարցվողների 72.0%-ը համարում է, որ այդ վարքը՝ անկախ տարիքից, անընդունելի է կանանց համար, և 42.6%-ը նույն վարքը անընդունելի են համարում տղամարդկանց համար: Այստեղ ևս նկատելի են որոշ գենդերային տարբերություններ, քանի որ տղամարդիկ զգալիորեն ավելի խստապահանջ են վերաբերում կանանց կողմից բարոյական նորմերի պահպանմանը, քան կանայք: Այսպես, եթե առանց ամուսնանալու կանանց սեռական հարաբերություններ ունենալն արընդունելի է համարում տղամարդկանց 74.6%-ը (տղամարդկանց համար անընդունելի է համարում տղամարդկանց 25.4%-ը), ապա կանանց համար այդ վարքն անընդունելի է գնահատվում կանանց 61.9 %-ի կողմից: Նմանապես, առանց ամուսնանալու հակառակ սեռի ներկայացուցչի հետ ապրելը կանանց համար անընդունելի է համարում հարցվողների 60.1%-ը, իսկ տղամարդկանց համար՝ 49.5%-ը :

12. Հարցվողների մեծ մասը՝ անկախ սեռից, առավել հանդուրժողականություն է ցուցաբերում աշխատանքային հարաբերությունների ոլորտում, բայց շատ ավելի քիչ հակված է հանդուրժող լինել հարևանի կամ ընկերոջ նկատմամբ: Միջինում կանայք ավելի հանդուրժող են միասեռականների նկատմամբ

(կանանց 10.3%-ը համոզված է, որ ընկերություն կանի միասեռականների հետ, այն ժամանակ, երբ նույն հարցին դրական է պատասխանել տղամարդկանց միայն 3.6%-ը): Սակայն, ընդհանուր առմամբ, կանայք ավելի քիչ հանդուրժողականություն են դրսևորում թոքախտով հիվանդների և հարբեցողների նկատմամբ:

13. Բնակչության վստահության մակարդակը մեր հասարակությունում գործող հիմնական սոցիալական ինստիտուտների հանդեպ բավականին ցածր է, մինչդեռ «հասարակական վստահությունը» հանդիսանում է տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը: Թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք առավելապես չեն վստահում Ազգային ժողովի գործունեությանը: Տղամարդիկ թերահավատորեն են տրամադրված արդարադատության համակարգի գործունեության նկատմամբ (տղամարդկանց 40.1%-ը նշել է, որ բոլորովին չի վստահում մեր երկրի արդարադատության համակարգին): Կանայք ավելի շատ վստահում են առողջապահության համակարգին և ՋԼՄ-ներիին: Ընդհանուր առմամբ, առավել մեծ է բնակչության վստահության աստիճանը բանակի և եկեղեցու ինստիտուտների նկատմամբ. եկեղեցու հանդեպ կանանց վստահության մակարդակը 10.8 տոկոսային կետով ավելի բարձր է:
14. Ամբողջ համակցության մեջ տղամարդ-միգրանտները 3 անգամ գերակշռում են, այսինքն, տղամարդիկ շատ ավելի ինտենսիվ են ներգրավված արտաքին միգրացիայի գործընթացներում (73.1% և 26.8%՝ համապատասխանաբար): Սակայն նկատելի են որոշ տարիքային տարբերություններ. այսպես, մինչև 35 տարեկան միգրանտ տղամարդիկ կազմում են 40.8%, իսկ կանայք՝ 52.7%, սակայն, արդեն 36-ից բարձր տարիքային խմբում տղամարդ-միգրանտները կազմում են 59.2%, իսկ կանայք՝ 47.3 %:
15. Համաձայն ստացված արդյունքների, տղամարդկանց 84.0%- ի և կանանց 63.6%-ի համար միգրացիայի հիմնական նպատակն արտասահմանում աշխատանք գտնելն է: Միևնույն ժամանակ, ստացված տվյալները վկայում են, որ տղամարդիկ միջինում ունենում են ավելի շատ աշխատանքային եկամուտ, քան կանայք: Կանանց 40.0%-ը և տղամարդկանց ընդամենը 13.3%-ը միգրացիայի ընթացքում որևիցե եկամուտ չեն ունեցել:
16. Ընդհանուր առմամբ կին- միգրանտներն ավելի անպաշտպան են, քանի որ նրանց հետ ավելի հազվադեպ են կնքում գրավոր աշխատանքային պայմանագրեր (15.2% և 9.4%՝ համապատասխանաբար): Հարկ է նշել, որ

- ընդհանրապես միգրանտների գրեթե 40.0%-ի հետ, ըստ ստացված արդյունքների, որևէ համաձայնագիր չի կնքվում:
17. Վերջապես, բավականին դժվար է մեկնաբանել պոտենցիալ միգրացիան, քանի որ տղամարդկանց 68.0%-ը և կանանց 74.5 %-ը հրաժարվել են պատասխանել այն հարցին, թե արդյոք հնարավորության դեպքում կմեկնեն երկրից:
18. Գենդերային հավասարության վերաբերյալ պատկերացումները բավականին հակասական են և իրարամերժ: Ընդհանուր առմամբ, նկատելի են երկու տարբեր միտումներ. մասնակիցների մի մասը, որտեղ գերակշռում են «կրթված» երիտասարդները, գտնում է, որ ներկայումս մեր հասարակությունում գենդերային հավասարությունն ապահովված չէ: Մինչդեռ, մասնակիցների մեկ այլ խումբ (հիմնականում մեծահասակ, հատկապես գյուղաբնակ) գենդերային խտրականության որևէ դրսևորում գրեթե չի տեսնում:
19. Կանանց սոցիալական կարգավիճակի բարձրացմանը խոչընդոտող հիմնական գործոնների շարքին են դասվել գենդերային կարծրատիպերը, ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակը երկրում, գենդերային սոցիալականացման առանձնահատկությունները, կանանց մոտ ֆինանսական և սոցիալական կապիտալների բացակայությունը, սոցիալական շերտավորման և շարժունության կայուն համակարգի բացակայությունը, իրավական ոչ կոմպետենտությունը և կանանց համախմբվածության պակասը:
20. Գենդերային հավասարության ապահովմանն ուղղված միջոցառումներից առանձնացվել են հետևյալները՝ կանանց համար հատուկ վարկային ծրագրերի տրամադրումը, կանանց ներգրավվումը համայնքային առաջնորդության գործընթացում, գենդերային կրթության տարածումը և գրագետ քարոզչության կազմակերպումը, տղամարդկանց ներգրավվումը գենդերային հավասարության սկզբունքների և գաղափարների տարածման գործընթացում և գենդերային հավասարության ապահովման բնագավառում ՋԿ-ների և պետության սերտ համագործակցությունը: